

մարդագետնում, որ արդէն հնձուած էր: Կատիւչային էլ կանչեցին խաղալու: Մի քանի փոփոխութիւններից յետոյ Նեխլիւզովն ու Կատիւչան իրար հետ ընկան: Նեխլիւզովի համար միշտ հաճելի էր տեսնել Կատիւչային, բայց նրա մտքովն անգամ չէր կարող անցնել, թէ իր և նրա մէջ կարող են լինել որ և է առանձին յարաբերութիւններ:

—Օ՛, սրանց բռնել անկարելի է,—ասաց «այրուող» ուրախ նկարիչը, որ շատ արագ վազում էր իր կարճլիկ ու ծուռ, բայց ուժեղ գեղջկային ոտներով:

—Թէ սայթաքեն, չը գիտեմ:

—Դուք ու չը բռնէք:

—Մէկ, երկու, երէք:

Երեք անգամ ծափ տուեցին: Միծաղը հազիւ հազ պահելով, Կատիւչան ձեռաց փոխեց տեղը Նեխլիւզովի հետ և, իր կոշտ ու կոպիտ փոքրիկ ձեռքով սղմելով նրա մեծ ձեռքը, վազ տուեց դէպի ձախ, խշխշացնելով իր օսլայած ներքնազգեստը:

Նեխլիւզովը լաւ վազող էր և, չուզենալով յաղթուել նրկարչից, սկսեց վազել ողբան ուժումը կար: Երբ նա յետ նայեց, տեսաւ, որ նկարիչը ընկել է Կատիւչայի յետևից, բայց կատիւչան, արագ-արագ փոխելով ջահէլ առածգական ոտները, տեղի չի տալիս նրան և հեռանում է դէպի ձախ: Առջևում եղբանների թփերի թումը կար, որի այն կողմը ոչ ոք չէր վազում. բայց Կատիւչան, յետ նայելով Նեխլիւզովի կողմը, դիտով արեց նրան, որ դնայ հետը միանալու թումքի յետևին: Նա հասկացաւ և վազեց թփերի յետևը: Բայց այդտեղ նրան անձանօթ մի խանդակ կար եղինջով ծածկուած. նա սայթաքեց և ընկաւ. նրա ձեռքը դաղուեց եղինջից ու թրջուեց կանաչը ծածկող ցօղից,—որովհետև արդէն իրիկնադէմ էր,—բայց նա իսկոյն վեր թռաւ, ծիծաղելով ինքն իր վրայ, դրստուեց ու վազեց դէպի արձակ ու իստակ տեղը:

Կատիւչան թռչում էր դէպի նա ժպիտից պայծառացած գէմքով և թայ հազարջի նման սև ու փայլուն աչքերով: Նրանք հասան իրար ու բռնեցին միմեանց ձեռքից:

ուզում».—ի՛նչպիսի աղջիկ».—«Յահէլ».—«Իսկ սիրո՞ւմ ես».—«սիրում եմ».—«փափուչներ կ'առնե՞ս».—«կ'առնեմ».—«մնա՛ս բարև, բարեկամ, աշխատիր չը բռնուես»,— և վերջին զուգը կազմողները սկսում են վազել զանազան կողմեր, աշխատելով բռնել իրար ձեռք առաջի կանգնողի տեղից այն կողմը, մինչդեռ այդ առաջի կանգնողը աշխատում է նրանցից մէկն ու մէկին բռնել նախ քան նրանց կը լաջողի մօտենալ իրար: Եթէ բռնում է, բռնածի հետ կանգնում է առաջին շարքում, իսկ մենակ մնացածը «այրում է»: Եթէ չէ բռնում, ինքը նորից «այրում է»:

—Ով գիտի, ձեռքներդ դադուեց,—ասաց նա, ազատ ձեռքով շիտկելով մազերի խառնշտուած հիւտը, ծանր շունչ քաշելով և ժպտալէն ներքեկից վերև նայելով ուղիղ նրա երեսին:

—Ես իսկի չը գիտէի, թէ այստեղ խանդակ կայ,—ասաց նա, նոյնպէս ժպտալով և բաց չը թողնելով նրա ձեռքը:

Կատիւչան մօտեցաւ նրան և նա, ինքն էլ չը գիտէր, թէ ինչպէս պատահեց այդ, երեսը մօտեցրեց նրա երեսին. Կատիւչան յետ չը քաշուեց, Նեխլիւդօյլը աւելի ամուր սղմեց նրա ձեռքը և համբուրեց չըթունքները:

—Վա՛, ա՛յդ ինչ էր,—ասաց Կատիւչան և արագ շարժումով դուրս կորզելով ձեռքը նրա ձեռքից՝ փախաւ նրա մօտից:

Հասնելով թփերին, նա պոկեց սպիտակ ու արդէն ծաղկաթափ եղրևանիի երկու ճիւղք, սկսեց նրանցով խփել իր բորբոքուած երեսին և, յետ-յետ նայելով Նեխլիւդօյլին ու արագ-արագ ճօճելով ձեռքերը իր առաջին, վերադարձաւ խաղալու տեղը:

Սյդ ժամանակից սկսած Նեխլիւդօյլի ու Կատիւչայի յարաբերութիւնները փոխուեցին և նրանց մէջ հաստատուեց այն առանձնատեսակ յարաբերութիւնը, որ առհասարակ լինում է իրարով գրաւուող անմեղ երիտասարդի և նոյնպիսի անմեղ աղջկայ մէջ...

Հէնց որ Կատիւչան մտնում էր սենեակը կամ թէ նոյն իսկ հեռուից երևում էր նրա սպիտակ գոգնոցը, իսկոյն Նեխլիւդօյլի աչքում ամեն ինչ փոխւում էր,—կարծես արև էր ծագում ու լուսաւորում նրա շուրջը,—իսկոյն ամեն ինչ դառնում էր աւելի հետաքրքրական, աւելի ուրախ, աւելի կարևոր և կեանքը թւում էր աւելի բերկրալի: Նոյնն էր զգում և Կատիւչան: Բայց Նեխլիւդօյլի վրայ այդ ազդեցութիւնն էր գործում ոչ միայն նրա ներկայութիւնն ու մօտիկութիւնը, այլ հէնց միայն այն գիտակցութիւնը, թէ աշխարհիս երեսին կայ մի Կատիւչա, Կատիւչայի վրայ էլ այն, թէ կայ մի Նեխլիւդօյլ: Դիցուք մի անախորժ նամակ էր ստանում Նեխլիւդօյլը մօրից, կամ թէ շարադրութիւնը լաւ չէր դուրս գալիս, կամ թէ պատանեկական անպատճառ տխրութիւն էր զգում, բաւական էր միայն յիշէր, որ Կատիւչան կայ և ինքը կարող է տեսնել նրան, և արդէն ամեն վիշտ փարատւում էր:

Կատիւչան շատ գործ ունէր անելու տանը, բայց նա կարողանում էր ամեն բան ժամանակին հասցնել և ղեռ ազատ բոլակներ էր զսնում կարգալու համար: Նեխլիւդօյլը տալիս էր նրան կարգալու Դօստօեվսկու և Տուրգենևի գրուածքները, որ

ինքն էլ հէնց նոր էր կարգացել: Կատիւչային ամենից աւելի դուր էր գալիս Տուրգենիւի «Ватимье»-ն: Նրանց մէջ խօսակցութիւն էր տեղի ունենում թուուցիկ կերպով, երբ պատահում էին իրար միջանցքում, պատշգամբում, բակում, երբեմն էլ մօրաքոյրների պառաւ աղախին Մատրեօնա Պաւլօւնայի մենակում, ուր ապրում էր նաև Կատիւչան և ուր Նեխլիւզօւլը մի մի անգամ գնում էր կծովի թէյ խմելու: Եւ նրանց ամենից շատ դուր էին գալիս իրանց այն խօսակցութիւնները, որոնք տեղի էին ունենում Մատրեօնա Պաւլօւնայի ներկայութեամբ: Աւելի վատ էր լինում խօսակցութիւնը, երբ նրանք մենակ էին լինում: Այդ դէպքերում նրանց աչքերը իսկոյն և եթ սկսում էին արտայայտել ինչ որ բոլորովին ուրիշ, շատ աւելի կարևոր բան, քան այն, ինչ որ նրանք բերնով էին ասում, շրթունքները սկսում էին կծկուել, զարգանդ էր գալիս վրաները և նրանք շտապով բաժանում էին իրարից:

Այդ յարաբերութիւնները շարունակուեցին Նեխլիւզօւլի և Կատիւչայի մէջ ամբողջ այդ ամառուայ ընթացքում: Մօրաքոյրները նկատեցին այդ յարաբերութիւնները, վախեցան և նոյն իսկ այդ բանի մասին գրեցին արտասահման Նեխլիւզօւլի մօրը, իշխանուհի Ելենա Իվանօւնային: Մարիա Իվանօւնա մօրաքոյրը վախենում էր, որ Նեխլիւզօւլը կը կապուի Կատիւչայի հետ: Բայց նրա վախը դուր էր.— Նեխլիւզօւլը, առանց իր իմանալու, սիրում էր Կատիւչային այնպէս, ինչպէս առհասարակ սիրում են անմեղ մարդիկ, և հէնց այդ անմեղ սէրն էր, որ զլխաւորապէս պահպանում էր անկումից թէ նրան, թէ Կատիւչային: Նա ոչ միայն ցանկութիւն չէր զգում մարմնապէս ունենալ Կատիւչային, այլ ընդհակառակը նրան սարսափ էր ազդում այն միտքը, թէ ինքը կարող է այդպէս վերաբերուել նրան: Շատ աւելի հիմնաւոր էր բանաստեղծական Սօֆիա Իվանօւնայի երկիւղը, թէ Դմիտրին, իր աներկմիտ և վճռական բնաւորութեամբ, սիրահարուելով այդ աղջկայ վրայ, մի գուցէ ուղի ամուսնանալ հետը, ուչք չը դարձնելով նրա ծագումին ու դիրքին:

Եթէ Նեխլիւզօւլը այն ժամանակ պարզ գիտակցէր, որ ինքը սիրում է Կատիւչային, և մանաւանդ եթէ սկսէին նրան համոզել, թէ նա ամենին չի կարող կապել և չը պէտք է կապի իր բախտը այդ աղջկայ հետ, շատ հեշտութեամբ կարող էր պատահել, որ նա, իր շիտակ բնաւորութեամբ, կը վճռէր, որ ոչ մի պատճառ չը կայ չամուսնանալու մի աղջկայ հետ, ով որ էլ լինի այդ աղջիկը, եթէ միայն ինքը սիրում է նրան: Բայց մօրաքոյրները բան չասացին նրան իրանց զգացած

երկիւղի մասին, և նա գնաց նրանց մօտից, առանց գիտակցելու իր սէրը դէպի Կատիւչան:

Նա հաւատացած էր, թէ իր համակրութիւնը դէպի Կատիւչան մի առանձին արտայայտութիւն էր կեանքի ազգած բերկրութեան, որով այդ ժամանակ լի էր նրա ամբողջ էութիւնը և որ զգում էր նաև այդ քաղցր ու զուարթ աղջիկը: Սակայն գնալու օրը, երբ Կատիւչան, մօրաբոյրների հետ սլաւոգամբումը կանգնած, ճանապարհ էր գնում նրան իր սևորակ, արտասուալից և փոքր ինչ շիլ աչքերով, նա զգաց, որ ինքը այդտեղ թողնում է մի ինչ որ գեղեցիկ, թանկագին բան, որ այլ ևս չի կրկնուիլ երբէք: Եւ նրա սիրտը սաստիկ տխրեց:

—Մնաս բարև, Կատիւչա, շնորհակալութիւն ամեն բանի համար,—ասաց նա Սօֆիա Իվանովնայի զլխի վրայով, կառքը նստելիս:

—Մնաք բարև, Դմիտրի Իվանովիչ,—ասաց Կատիւչան իր դուրեկան, փաղաքչիչ ձայնով և, պահելով աչքերը լցրած արտասուքը, փախաւ սրահը, ուր կարող էր ազատ լաց լինել:

### XIII

Դրանից յետոյ Նեխլիւդովը երեք տարի չէր տեսել Կատիւչային, և տեսնուեց նրա հետ միայն այն ժամանակ, երբ հէնց նոր օֆիցէրութիւն ստացած գնում էր զօրքի հետ միանալու և ճանապարհին մտաւ մօրաբոյրների մօտ, արդէն բոլորովին փոխուած և այնպիսի մարդ դարձած, որ ամենևին նման չէր երեք տարի առաջ նրանց մօտ ամառը հիւր եկած ուսանող Նեխլիւդովին:

Այն ժամանակ նա ազնիւ և անճնուրաց պատանի էր, պատրաստ նուիրել անձը ամեն մի բարի գործի համար. այժմ նա փշացած, նրբացած ևսամոլ էր, ընդունակ սիրելու միայն իր զուարճութիւնը: Այն ժամանակ Աստուծու աշխարհը թւում էր նրան մի գաղտնիք, որ նա բերկրանքով և յափշտակութեամբ աշխատում էր լուծել. այժմ ամեն ինչ այս կեանքում պարզ էր ու որոշ նրա համար և սահմանւում էր այն կենսական պայմաններով, որոնց մէջ գտնւում էր նա: Այն ժամանակ հարկաւոր և կարևոր էր թւում նրան հաշտուել ընտելեան և այն մարդկանց հետ, որոնք ապրել, մտածել ու զգացել էին մինչև նրա ժամանակը (փիլիսոփաների, բանաստեղծների հետ), այժմ հարկաւոր և կարևոր էին թւում մարդկային հաստատութիւնները և յարաբերութիւնները ընկերների հետ: Այն ժամանակ կիրք

նրա համար մի խորհրդաւոր և սքանչելի—հէնց այն խորհրդաւորութեամբը սքանչելի—էակ էր. այժմ կանանց դերը,— բոլոր կանանց, բացի իր ընտանիքը կազմող կանանցից և իր մտերիմների ամուսիններից, շատ որոշ էր,—կէնը արդէն զգացած զուարճութիւնը ստանալու միջոցների մէջ ամենալաւերից մէկն էր: Այն ժամանակ փող պէտք չէր և կարելի էր մօր տուածի մի երրորդ մասն անգամ չը վերցնել, կարելի էր հրաժարուել հօրից մնացած կալուածքից և ժառանգած հողաբաժինը տալ գիւղացիներին. իսկ այժմ նրան չէր բաւականանում այն 1500 ուռբլին, որ մայրը տալիս էր նրան ամեն ամիս, և արդէն մօր ու որդու մէջ անախորժ խօսակցութիւններ էին լինում փողի պատճառով: Այն ժամանակ նա իր հոգեկան էութիւնն էր համարում իր իսկական ետր, իսկ այժմ նա իր ինքնութիւնը տեսնում էր իր առողջ ու աշխոյժ անասնական ետի մէջ:

Եւ այդ ամբողջ սարսափելի փոփոխութիւնը կատարուեց նրա մէջ միմիայն այն պատճառով, որ նա դադարեց ինքն իրան հաւատալուց և ընդհակառակը՝ սկսեց հաւատալ ուրիշներին: Իսկ դադարեց նա ինքն իրան հաւատալուց և սկսեց հաւատալ ուրիշներին այն պատճառով, որ ինքն իրան հաւատալով ապրելը շատ դժուար էր. ինքն իրան հաւատալիս, ամեն մի հարց պէտք էր վճռել միշտ ոչ ի նպաստ իր անասնական ետի, որ հեշտ զուարճութիւններ է փնտռում, այլ գրեթէ միշտ նրա դէմ. իսկ ուրիշներին հաւատալով ապրելիս՝ ոչինչ չէր մնում վճռելու, որովհետեւ ամեն ինչ արդէն վճռուած էր և վճռուած՝ միշտ ընդդէմ հոգեկան ետի և ի նպաստ անասնական ետի: Բացի այդ, ինքն իրան հաւատալիս, նա միշտ ենթարկուում էր մարդկանց դատապարտութեան, իսկ ուրիշներին հաւատալիս, նա հաւանութիւն էր ստանում իրան շրջապատողներից:

Այդպէս օրինակ, երբ Նեխիլեզօյը մտածում, կարդում ու խօսում էր Աստուծու, արդարութեան, հարստութեան ու աղքատութեան մասին,—բոլոր շրջապատողները անտեղի և մասամբ ծիծաղելի էին համարում այդ, և մայրն ու մօրաքոյրը բարետիրտ հեգնութեամբ *notre cher philosophe* \*) էին անուանում նրան. իսկ երբ նա վէպեր էր կարդում, անվազիլ անեկղօտներ էր պատմում, կամ գնում էր ֆրանսիական թատրոնը ծիծաղաշարժ վօդրիլիներ տեսնելու և ուրախ-ուրախ պատմում էր նրանց բովանդակութիւնը,—ամենքը գովում ու քաջալերում էին նրան: Երբ նա հարկաւոր էր համարում չափաւորել իր պահանջները, հնացած վերարկու էր հագնում ու գինի չէր խմում,—ամենքը

\*) Մեր սիրելի փիլիսոփան:

օտարոտիութիւն էին համարում այդ և մի տեսակ պարծենկոտութիւն ընուրոյնութեամբ. իսկ երբ նա ահագին փողեր էր ծախսում որսորդութեան համար կամ արտասովոր ճոխութեամբ առանձնասենեակը կահաւորելու վրայ,—ամենքը գովում էին նրա ճաշակը և թանկագին բաներ էին ընծայում նրան: Երբ նա որջախոտ էր և ուզում էր այդպէս մնալ մինչև ամուսնանալը, ազգականները երկիւղ էին կրում նրա առողջութիւնից, և նոյն իսկ մայրը չը վշտացաւ, այլ աւելի շուտ՝ ուրախացաւ, երբ իմացաւ, որ նա կատարեալ տղամարդ է դարձել և ինչ-որ մի Փրանսուհու խել է իր ընկերից: Իսկ կատիւչայի հետ եղած ղէպքի մասին,—այն բանի մասին, որ Նելսոնիւղովի մտքովը կարող էր անցնել ամուսնանալ այդ աղջկայ հետ, իշխանուհի մայրը չէր կարող մտածել առանց սարսափի:

Նոյնպէս և այն ժամանակ, երբ Նելսոնիւղովը, չափահաս դաճալով, հօրից ժառանգութիւն ստացած փոքրիկ կալուածքը տուեց գիւղացիներին, որովհետև անարդար բան էր համարում հողատիրութիւնը,—նրա այդ վարմունքը սարսափեցրեց նրա մօրն ու հարազատներին, և մշտական առիթ դարձաւ նրա բոլոր ազգականների համար նրան յանդիմանելու և ծաղրելու: Անդադար աճում էին նրան, թէ այդ հողը ստացող գիւղացիները ոչ միայն չեն հարստացել, այլ և աղքատացել են, որովհետև երեք գինեատուն են բացել իրանց գիւղում և այլ ևս չեն ուզում ամենքին աշխատել: Իսկ երբ Նելսոնիւղովը, գլարդիան մտնելով, իր ընկերների հետ այնքան ծախսեց ու թղթում տարուեց, որ Ելենա Իվանովնան ստիպուած եղաւ փող վերցնել մայր գումարից, նա (Ելենա Իվանովնան) գրեթէ ամենևին չը վշտացաւ, այն կարծիքին լինելով, որ այդ բնական բան է, և նոյն իսկ լաւ է, որ այդ ծաղիկը երիտասարդ հասակում ու լաւ հասարակութեան մէջ է պատուաստում իր որդուն:

Սկզբում Նելսոնիւղովը մաքառում էր, բայց մաքառումը չափազանց դժուար էր, որովհետև այն ամենը, ինչ որ նա, ինքն իրան հաւատալով լաւ էր համարում, ուրիշները վատ էին համարում, և, ընդհակառակը՝ այն ամենը, ինչ որ, ինքն իրան հաւատալով, նա վատ էր համարում, լաւ էին համարում բոլոր շրջապատողները: Եւ բանը վերջացաւ նրանով, որ Նելսոնիւղովը անձնատուր եղաւ, դադարեց ինքն իրան հաւատալուց ու սկսեց հաւատալ ուրիշներին: Եւ սկզբի ժամանակներում այդ սեփական հաւատի ուրացումը անախորժ էր, բայց այդ անախորժ զգացմունքը շատ կարճ տևեց, և Նելսոնիւղովը շատ շուտով դադարեց այդ անախորժութիւնը զգալուց և նոյն իսկ մեծ սփոփում զգաց, միաժամանակ սկսելով նաև ծխել ու գինի խմել:

Եւ Նեխիլեղօվը, իր կրքոտ բնաւորութեամբ, ամբողջովին անձնատուր եղաւ այդ նոր, իրան շրջապատող բոլոր մարդկանց կողմից հաւանութիւն գտնող, կենցաղավարութեան, ու բոլորովին խեղդեց իր մէջ այն ձայնը, որ ինչ-որ ուրիշ բան էր պահանջում: Այդ սկսուեց Պետերբուրգ տեղափոխուելուց յետոյ և աւարտման հասաւ զինուորական ծառայութիւն մտնելովը:

Իր կեանքի այդ շրջանում Նեխիլեղօվը զգում էր այն բոլոր բարոյական արգելքներից ազատուելու հրճուանքը, որ ինքը առաջ գնում էր իր վերաբերմամբ, և շարունակ գտնուում էր խելագարութեան հասած եւամոլութեան քրօնիկական վիճակի մէջ:

Հէնց այդպիսի վիճակի մէջ էր նա, երբ երեք տարի անցած այցելեց իր մօրաքոյրներին:

#### XIV

Նեխիլեղօվը այցելեց մօրաքոյրներին այն պատճառով, որ նրանց կալուածքը այն ճանապարհի վրայ էր, որով նա պէտք է գնար՝ որպէս զի հասնէր իրանից առաջ գնացած զօրագնդին, և այն պատճառով, որ նրանք շատ էին խնդրել նրան, որ այցելի իրանց, բայց գլխաւորապէս նրա համար, որ տեսնէր կատիւչային: Թերեւս հոգու խորքումը նա արդէն վատ դիտաւորութիւն ունէր կատիւչայի վերաբերմամբ, բայց նա չէր դիտակցում այդ դիտաւորութիւնը, որ թելադրում էր նրան նրա մէջ ապրող և այժմ սանձից արձակուած անասնական մարդը, այլ ուղղակի նրա սիրտն ուղում էր նորից ապրել այն վայրերում, ուր այնքան լաւ էր զգում նա իրան մի ժամանակ, և տեսնուել փոքր ինչ ծիծաղելի, բայց քաղցր ու բարեհոգի մօրաքոյրների հետ, որոնք միշտ, նրա համար աննկատելի կերպով, շրջապատում էին նրան սիրոյ և յափշտակութեան մթնոլորտով, և տեսնել սիրունիկ կատիւչային, որի մասին այնքան քաղցր յիշողութիւն էր պահել նա:

Մօրաքոյրների կալուածքը հասաւ նա մարտի վերջին, Աւագ Հինգշաբթի, սաստիկ փչացած ճանապարհներով, տարափի տակ ընկած, մինչև չապիկը թրջուած և սաստիկ մրսած, բայց առոյգ ու աշխոյժ, ինչպէս նա միշտ զգում էր իրան այդ ժամանակ: «Տեսնես մօտներն է կատիւչան», մտածում էր նա, մըտնելով մօրաքոյրներէ հինաւուրց կալուածատիրական ծանօթ բակը, որ շրջապատուած էր աղիւսէ պատով և լի էր կտուրներից ներքև թափուած ձիւնով: Նա սպասում էր, թէ կատիւչան դուրս կը վազի նրա կողքի զանգակի ձայնին, բայց աղախինների պատշգամբը դուրս եկան, ջրի դոյլերը ձեռներին, եր-

կու ստարորիկ և փէշերը քշած գիւղացի կանայք, որոնք, ակ-  
ներեաբար, լուանում էին տան տախտակամածը: Գլխաւոր  
պատշգամբումն էլ նա չը կար. այնտեղ դուրս եկաւ միայն լա-  
քէյը, Տիխօնը, գոգնոցը հագին և երեի նոյնպէս զբաղուած սու-  
նը մաքրելով: Հաշտը դուրս եկաւ Սօֆիա Իվանովնան, մետաքսէ  
հագուտով և չեպչիկը գլխին:

— Ի՞նչ լաւ արեցիր, որ եկար, — ասում էր Սօֆիա Իվա-  
նովնան, համբուրելով նրան: — Մաշինկան մի քիչ տկար է. ե-  
կեղեցում յողնել է: Այսօր հաղորդ առանք:

— Շնորհաւորում եմ հաղորդներդ, մօրաքոյր, — ասաց Նեխ-  
իւղօվը, համբուրելով Սօֆիա Իվանովնայի ձեռները, — ներեցէք,  
թրջեցի ձեզ:

— Գնա քո սենեակը: Ամբողջ ջուր ես դարձել: Տես է, բե-  
խեր ունես արդէն... Կատիւշն, Կատիւշն: Շնուտ, սուրճ տուր խմի:

— Այս բոպէիս, — լսուեց միջանցքից ծանօթ քաղցր ձայնը:  
Եւ Նեխիւղօվի սիրտը ցնծութեամբ թռուճ էլաւ «Այստեղ է»: Նրա  
համար կարծես արեւը դուրս նայեց թուխպերի տակից, և  
նա ուրախ-ուրախ Տիխօնի հետ գնաց իր նախկին սենեակը՝ շո-  
րերը փոխելու:

Սիրան ուզում էր հարցնել Տիխօնից Կատիւշայի մասին —  
ինչպէս է, ինչպէս է ապրում, մարդու չէ գնում: Բայց Տիխօ-  
նը այն աստիճան պատկառոտ էր և մի և նոյն ժամանակ խիստ,  
այնքան հաստատ կերպով էր պնդում, որ ինքը ջուր ածի նրա  
ձեռներին, որ Նեխիւղօվը սիրտ չարեց հարց ու փորձ անել  
նրան Կատիւշայի վերաբերմամբ և հարցրեց միայն նրա թոռ-  
ների մասին, եղբօր պառաւ նժոյգի մասին, Պօլկան շան մասին:  
Դրանք ամենքն էլ ողջ էին ու առողջ, բացի Պօլկանից, որ կա-  
տաղել էր անցեալ տարի:

Թաց շորերը հանելուց յետոյ Նեխիւղօվը հէնց նոր էր ըս-  
կսել հագնուել, երբ արագ քայլերի ձայն լսուեց և մի բոպէ ան-  
ցած մէկը թխթխկացրեց դուռը: Նեխիւղօվը ծանաչեց թէ ոտ-  
նաձայնը, թէ դռան թխթխկոցը: Միայն Կատիւշան էր այդպէս  
ման գալիս ու թխթխկացնում:

Նեխիւղօվը քցեց ուսերին թաց վերարկուն ու մօտեցաւ  
դռանը:

— Մտէք:

Նա էր, Կատիւշան: Էլի նոյնը, — դեռ աւելի քաղցրիկ, քան  
առաջ: Էլի նոյնպէս ներքեից վերև էին նայում ժպտուն, միա-  
միտ, փոքր ինչ չի սև աչքերը: Էլի առաջուան պէս՝ մաքուր  
սպիտակ գոգնոց ունէր հագին: Նա բերել էր մօրաքոյրներից մի  
կտոր անուշաբոյր սապոն, որ նոր էին հանել թղթի փաթեթից,

և երկու երեսորբիչ, մէկը մեծ, ուսական երեսորբիչ, միւսը՝ փրչոտ։ Եւ չը բանեցրած սապոնը դրոշմած տառերով, և՛ այդ երեսորբիչները, և՛ ինքը կատիւշան—բոլորն էլ միատեսակ մաքուր էին, թարմ, անձեռնամուխ և դուրեկան։ Կատիւշայի սիրունիկ և պինդ ու կարմիր շրթուկները, Նեխլիւզովին տեսնելիս, էլի առաջուան պէս կուշ եկան անզուսպ ուրախութիւնից։

—Փառլուտներդ բարի, Դմիտրիյ Իվանովիչ,—դժուարութեամբ արտասանեց նա, և դէմքը ամբողջ կարմրատակեց։

—Բարև, ինչպէս ես, լաւ ես, ինչպէս էք, լաւ էք,—չէր իմանում Նեխլիւզովը, թէ ինչպէս խօսէր հետը, «դու»-ով թէ «դուք»-ով, և ինքն էլ կարմրեց նրա պէս։

—Փառք Աստուծու... Ահա մօրաքոյրը ուղարկեց ձեզ համար ձեր սիրած վարդագոյն սապոնը,—ասաց նա, սապոնը դնելով սեղանի վրայ, երեսորբիչներն էլ բազկաթոռի բազուկները վրայ։

—Սրանք իրանց սապոնն ունեն,—հիւրի ինքնուրոյնութեանը պաշտպան հանդիսացաւ Տիխօնը, հպարտութեամբ ցոյց տալով Նեխլիւզովի արծաթէ կափարիչներով մեծ ցեխերը, որ բաց էր արուած և որի մէջ լիքն էին բազմաթիւ սրուակներ, խրզանակներ, ֆիքսատուարներ, անուշահոտութիւններ և արդեղէնի ամեն տեսակ պարագաներ։

—Շնորհակալութիւն արէք մօրաքոյրը։ Ո՛րքան ուրախ եմ, որ եկայ,—ասաց Նեխլիւզովը, զգալով, որ հոգին նորից սկսում է պայծառանալ և գորովով լցուել այնպէս, ինչպէս այդ լինում էր մի ժամանակ։

Կատիւշան ժպտաց միայն ի պատասխան այդ խօսքերին և դուրս դնաց։

Մօրաքոյրները, որոնք առանց այն էլ միշտ սիրում էին Նեխլիւզովին, այս անգամ սովորականից աւելի ուրախութեամբ հանդիպեցին նրան։ Դմիտրին գնում էր պատերազմի, ուր կարող էին վիրավորել, սպանել նրան։

Այդ շարժում էր մօրաքոյրների գորովը։

Նեխլիւզովը իր ճանապարհորդութիւնը այնպէս էր կարգադրել, որ մօրաքոյրների մօտ պէտք է մի օր միայն մնար, բայց Կատիւշային տեսնելով, նա համաձայնեց նրանց մօտ հանդիպել Զատիկը, որ երկու օրից յետոյ էր լինելու, և հեռագրեց իր մտերիմ ընկեր Շէնբօկին, որի հետ առաջուց պայմանաւորուել էին իրար պատահել Օդեսսայում, որ նա էլ զայ մօրաքոյրների մօտ։

Կատիւշային տեսնելու առաջին օրից Նեխլիւզովը զգաց

դէպի նա նոյնը, ինչ որ զգում էր առաջ: Նոյնպէս, ինչպէս և այն ժամանակ, նա չէր կարողանում առանց յուզմունքի տեսնել կատիւշայի սպիտակ գոգնոցը, չէր կարողանում առանց հրրձուանքի լսել նրա քայլերը, ձայնը, ծիծաղը, չէր կարողանում առանց խանդաղատանքի նայել նրա՝ թաց հաղարձի նման սև աչքերի մէջ, մանաւանդ երբ նա ծպտում էր, և, որ զխաւորն է, չէր կարողանում առանց շփոթութեան տեսնել, թէ ինչպէս նա կարմրում է իրան հանդիպելիս: Նա զգում էր, որ ինքը սիրահարուած է, բայց ոչ այնպէս, ինչպէս առաջ, երբ այդ սէրը զաղանկը էր նրա համար ու նա ինքն իրան անգամ չէր համարձակուում խոստովանել, որ ինքը սիրում է, և երբ նա համոզուած էր, թէ սիրել կարելի է կեանքում միայն մի անգամ. այժմ նա սիրահարուած էր, գիտակցելով իր սիրահարուածութիւնը և ուրախ լինելով այդ բանին և անորոշ կերպով իմանալով, թէ և թագցնելով ինքն իրանից, թէ ինչուին է կայանում այդ սէրը և ինչ կարող է դուրս գալ նրանից:

Նեխիլուզովի, ինչպէս առհասարակ ամենքի մէջ, երկու մարդ կար: Մէկը հոգեկան էակ, որ միմիայն այնպիսի բարիք է փնտռում իր համար, որ բարիք լինէր նաև ուրիշ մարդկանց համար, և միւսը՝ անասնական էակ, որ բարիք է փնտռում միմիայն իր համար և այդ բարիքի սիրուն պատրաստ է զոհել ամբողջ աշխարհի բարիքները: Իր կեանքի այդ շրջանում, երբ նա խելագարութիւն դարձած եսամոլութեան էր հասել Պետերբուրգի բարոյական մթնոլորտի և զինուորական կենցաղավարութեան շորհիւ, Նեխիլուզովի մէջ անասնական էակը իշխում էր միահեծան, կատարելապէս ճնշելով հոգեկան էակին: Բայց երբ նա տեսաւ կատիւշային և նորից զգաց այն, ինչ որ նա մի ժամանակ զգում էր դէպի կատիւշան, հոգեկան էակը բարձրացրեց գլուխը և սկսեց յայտարարել իր իրաւունքները: Եւ Նեխիլուզովի մէջ, մինչև Զատիկը մնացած այդ երկու օրուայ ընթացքում, անընդհատ կատարուում էր մի ներքին կռիւ, որ սակայն նա ինքը չէր գիտակցում:

Իր հոգու խորքում նա գիտէր, որ ինքը պէտք է գնայ և որ հարկ չը կայ այժմ մնալ մօրաքոյրների մօտ, գիտէր, որ մնալուցը ոչ մի լաւ բան չէ կարող դուրս գալ, բայց այնքան քաղցր ու դուրեկան էր մնալը, որ նա այդ բանը չէր ասում ինքն իրան ու մնում էր:

Շաբաթ երեկոյեան, Գրիստոսի Յարութեան ճրագալոյցին, քահանան ու սարկաւազը եկան գիշերուան ժամն ասելու, ինչպէս իրանք պատմում էին, հազիւ հազ կարողանալով լճացած ջրերի միջով սահնակով անցնել այն երեք վերստ տա-

բաժուժիւնը, որ բաժանում էր եկեղեցին մօրաքոյրների տնից:

Նեխլիւզօվը մօրաքոյրների ու ծառաների հետ լսեց ժամերգութիւնը, անդադար նայելով Կատիւշային, որ կանգնած էր դռանը և խունկ էր բերում, համբուրուելով \*) շնորհաւորեց քահանայի ու մօրաքոյրների Չատիկը և արդէն ուզում էր գնալ քնելու, երբ լսեց, թէ ինչպէս միջանցքում Մարիա Իվանօվնայի պառաւ աղախին Մատրեճնա Պաւլօվնան ու Կատիւշան պատրաստում են եկեղեցի գնալ կուլիչներ ու պաակահներ օրհնել տալու համար («ես էլ կ'երթամ»), մտածեց նա:

Մինչև եկեղեցի այդ ժամանակ ոչ անուաւոր կառքի համար կարգին ճանապարհ կար, ոչ սահնակի համար, ուստի Նեխլիւզօվը, որ մօրաքոյրների մօտ այնպէս էր կարգադրութիւններ անում, ինչպէս իր տանը, հրամայեց թամբել իր համար «եղբօր» կոչուած նժոյգը, և փոխանակ պառկելու քնելու, հազաւ փայլուն համազգեստն ու քիփ բէյտուզները, վրան քցեց զինուորական վերարկուն և հեծնելով մտում կորած, ծանրացած և անվերջ խրխնջացող պառաւ նժոյգը, ճանապարհ ընկաւ մթութեան, լճացած ջրերի և ձիւների միջով դէպի եկեղեցին:

## XV

Այդ ժամերգութիւնը այնուհետև Նեխլիւզօվի ամբողջ կեանքի ընթացքում մնաց նրա ամենալուսաւոր և ամենազօրեղ յիշողութիւնների թւում:

Ժամը արդէն սկսուել էր երբ նա սև խաւարի մէջ, որ տեղտեղ միայն փարատուում էր սպիտակին տուող ձիւնից, ջուրը չփչփացնելով մտաւ եկեղեցու բակը իր ձիով, որ ականջները խլշտացնում էր, տեսնելով եկեղեցու շուրջը վառուած ճրագները:

Գիւղացիները ճանաչեցին Մարիա Իվանօվնայի քրոջ որդուն, առաջնորդեցին նրան չոր տեղ, ուր կարելի իր իջնել, ձին քաշեցին կապելու և իրան տարան եկեղեցի: Եկեղեցին լի էր տօնօրեայ բազմութեամբ:

Աջակողմում կանգնած էին տղամարդիկ, ծերերը՝ տնագործ կաֆտաններով ու տրեխներով և մաքուր սպիտակ տոփ փաթաթաններով, իսկ երիտասարդները՝ նոր մահուդէ կաֆտաններով, վառգոյն գօտիկներով և կօշիկներով: Չախակողմում՝ կնանիք կարմիր մետաքսէ գլխաշորերով, վառկարմիր թեքաւոր պլիսէ բաճկոններով, կապոյտ, կանաչ, կարմիր ու գոյնզգոյն չրջա-

\*) Ռուսների մէջ ընդունուած սովորութիւն է համբուրուել Չատիկը շնորհաւորելու:

զգեստներով և պայտաւոր կիսակօշիկներով: Համեստ պառաւան-  
բը, սպիտակ գլխաշորերով, մոխրագոյն կաֆտաններով, հնաձև  
պանծօլաններով և բաշմակներով կամ նոր տրեխներով, կանգնած  
էին նրանց յետինս. ջահէլների ու պառաւանքի արանքում կանգ-  
նած էին զուգած երեխաները իւղոտ գլուխներով: Տղամարդիկ խաչ  
էին հանում ու ծունկ չղքում, թափահարելով մազերը. կնանիք,  
մանաւանդ պառաւանքը, որոնք խոունացած աչքերը յառել էին մի  
մոմապատ պատկերի, իրար կպցրած մատները պինդ սղմում էին  
իրանց գլխաշորով ծածկուած ճակատին, ուսերին ու փորին և,  
ինչ-որ շնջալով, կանգնած կռանում էին կամ ծունկ էին չո-  
քում: Երեխաները, մեծերին նմանուելով, եռանդով աղօթում  
էին, երբ նայող էր լինում նրանց վրայ: Ոսկէ խաչկալը շողշո-  
ղում էր մոմերից, որոնցով ամեն կողմից շրջապատուած էին  
ոսկեպատ մեծ մոմերը: Ջահի վրայ շարուած էին մոմեր, դպիւր-  
ների դասերից լսում էին ուրախ եղանակներ, որ երգում էին  
կամաւոր երգիչներ, գոռացող բասերով և բարակ դիսկանտնե-  
րով:

Նեխլիւզօվը առաջ անցաւ: Մէջտեղում կանգնած էր ազ-  
նուական դասը—մի կալուածատէր իր կնոջ ու նաւաստիի շոր  
հագած տղայի հետ, ստանօլօյը, հեռագրապետը, մի վաճառա-  
կան երկարաճիտք կօշիկներով, ստարչինան չքաղբամով և բեմի  
աջակողմը, կալուածատիրուհու յետին, Մատրեօնա Պալօլիան  
գոյնզգոյնի տուող կարմրակապոյտ զգեստով ու երիզաւոր սպի-  
տակ շալով և Կատիւչան իրանքը փոթէփոթ սպիտակ զգեստով,  
կապոյտ գօտիով և սև մազերին կապած կարմիր ժապաւէնով:

Ամեն ինչ տօնօրեայ էր, հանդիսաւոր, ուրախ և գեղեցիկ,—  
և՛ քահանան ոսկէկար խաչերով զարդարած բացգոյն արծաթակար  
չուրջառով, և՛ սարկաւազը, և՛ դպիւրները տօնօրեայ արծաթա-  
կար ու ոսկէկար ժամաշապիկներով, և՛ զուգուած կամաւոր եր-  
գիչները իւղոտ մազերով, և՛ տօնային երգերի ուրախ եղանակ-  
ները, և՛ այն, որ քահանաները անդադար օրհնում էին ժողովըր-  
դին երբեակ ծաղկազարդ մոմերով շարունակ կրկնելով՝ Քրիս-  
տոս յարեաւ ի մեռելոց: Ամեն ինչ գեղեցիկ էր, բայց ամենից լաւը  
Կատիւչան էր սպիտակ զգեստով և կապտագոյն գօտիով, սև մա-  
զերի կարմիր հանգոյցով և ցնծութիւնից փայլող աչքերով:

Նեխլիւզօվը զգում էր, որ Կատիւչան տեսնում է իրան,  
առանց յետ նայելու: Նա տեսաւ այդ, երբ Կատիւչայի կողքով  
անցնում էր դէպի սեղանը: Նա իսկապէս բան չուներ ասելու  
Կատիւչային, բայց հնարեց ու ասաց, անցնելով նրա մօտով.

—Մօրաբոյրն ասաց, որ թաթախուելու է յետուան պա-  
տարագից վերջը:

Կատիւչայի երիտասարդ արիւնը տուեց երեսը և կարմրացրեց նրա ամբողջ սիրունիկ դէմքը, ինչպէս լինում էր միշտ, երբ նա նայում էր Նելիլիւզովին, և նրա սև աչքերը, ծիծաղելով և ուրախանալով ու միամտաբար ներքեից վերև նայելով, կանգ առան Նելիլիւզովի վրայ:

— Գիտեմ, — ասաց նա ժպտալով:

Այդ ժամանակ տիրացուն պղնձէ սրճամանի նման գանձանակը ձեռքին, բազմութեան մէջով ճանապարհ բանալով իր համար, անցաւ Կատիւչայի կողքով, և առանց նայելու նրա վրայ, դիպաւ նրան ժամաչապիկի փէշով: Տիրացուն, ակներևաբար, յարգանք ցոյց տալով Նելիլիւզովին, պտոյտ տուեց նրա մօտով և այդ պատճառով փէշովը կպաւ Կատիւչային: Իսկ Նելիլիւզովը զարմանում էր, թէ ինչպէս այդ տիրացուն չէ հասկանում, թէ ամեն ինչ, որ գոյութիւն ունի այդտեղ և առհասարակ արար աշխարհում, գոյութիւն ունի միմիայն Կատիւչայի համար, և որ կարելի է անուշադիր լինել դէպի ամեն բան աշխարհումս, բայց ոչ դէպի Կատիւչան, որովհետև նա է ամեն բանի կենտրոնը: Նրա համար էր փայլում խաչկալի ոսկին, նրա համար էին փառում այդ մոմերը ջահում ու աշտանակներում, նրա համար էին այդպէս բերկրանքով երգում՝ «Չատիկ Տեանն է, ցնծացէք, ժողովուրդք»: Եւ ինչ որ լաւ բան կար աշխարհումս, բոլորը նրա համար էր: Եւ թւում էր Նելիլիւզովին, թէ Կատիւչան էլ հասկանում է, որ այդ ամենը իր համար է: Այդպէս էր թւում Նելիլիւզովին, երբ նա նայում էր նրա փոթփոթ սպիտակ զգեստում երևող զեղակազմ հասակին և նրա ինքնամփոփ ուրախ դէմքին, որի արտայայտութիւնից նա տեսնում էր, որ իսկ և իսկ նոյն բանը, որ երգում է իր հոգու մէջ, երգում է նաև նրա հոգու մէջ:

Վաղորդեան և յետուան պատարագներէ ժամանակամիջոցում Նելիլիւզովը դուրս եկաւ եկեղեցուց: Ժամաւոր ժողովուրդը ճանապարհ էր բանում նրա առաջ և գլուխ էր տալիս: Ո՛րը ճանաչում էր նրան, որն էլ հարցնում՝ «ու՛մնոնցից է»: Գաւթում նա կանգ առաւ: Աղքատները չըջապատեցին նրան, նա բաժանեց նրանց՝ քսակումը ունեցած մանրափողը և աստիճաններովը իջաւ ներքև:

Այնքան լուսացել էր արդէն, որ կարելի էր ամեն բան տեսնել, բայց արևը դեռ չէր դուրս եկել: Ժողովուրդը նստտակ էր եկեղեցու շուրջը գտնուող գերեզմանների վրայ: Կատիւչան մնացել էր եկեղեցում, և Նելիլիւզովը կանգ առաւ նրան սպասելու համար:

Ժամաւորները իրար յետեից դուրս էին գալիս եկեղեցուց և,

կօչիկները մեխերով զրնդացնելով սալաքարերը, իջնում էին աստիճաններովը և ցրում բակում ու գերեզմանատանը:

Մարիա Իվանովնայի կօնդիտէրը,—մի գառամնալ ծերունի երերուն զլխով,—կանգնեցրեց Նեխլիւզովին ու համբուրուեց հետը, և ծերունու կիներ,—մի պառաւ, մետաքօէ զլխաշորի տակից երևող կծկուած կլտիկով,—Թաշկինակից հանեց մի դեղին, զաֆրանագոյն ձու ու տուեց նրան: Միաժամանակ մօտեցաւ նրան մի մկանոտ գեղջուկ, նոր բաճկոնով ու կանաչ գօտիկով:

—Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ասաց նա, ծիծաղուն աչքերով, և, ձգուելով դէպի Նեխլիւզովը ու խուտուտ անելով նրա երեսը իր գանգուր միրուքով, երեք անգամ համբուրեց նրա չրթունքների սւղիղ մէջտեղը իր պինդ ու թրամ չրթունքներով:

Այն ժամանակ, երբ Նեխլիւզովը համբուրւում էր այդ գիւղացու հետ, ներս ծծելով գեղջկային առանձնայատուկ ախորժեկի հոտը, և վերցնում էր նրա տուած թունդ դարչնագոյն ձուն, եկեղեցու դռան մէջ երևացին Մատրեօնա Պաւլօվնայի գոյնզգոյնի տուող զգեստը և Կատիւշայի սիրունիկ սևահեր գլուխը կարմիր ժապաւէնով:

Կատիւշան իսկոյն տեսաւ Նեխլիւզովին իր առջևից գնացողների գլուխների վրայից, և Նեխլիւզովը տեսաւ, թէ ինչպէս պայծառացաւ նրա դէմքը:

Նա ու Մատրեօնա Պաւլօվնան դուրս եկան գաւիթը ու, կանգ առնելով, սկսեցին ողորմութիւն տալ աղքատներին: Կատիւշային մօտեցաւ մի աղքատ, որի քթի տեղում լաւացած խոցի կարմիր հետք էր երևում միայն: Կատիւշան ինչ-որ բան հանեց թաշկինակի մէջից, տուեց նրան ու յետոյ մօտեցաւ և առանց ամենաչնչին զգուանքի, այլ, ընդհակառակը, նոյնպէս ուրախ ու փայլուն աչքերով, երեք անգամ համբուրուեց նրա հետ: Եւ այն ժամանակ, երբ նա համբուրւում էր աղքատի հետ, նրա աչքերը հանդիպեցին Նեխլիւզովի հայեալքին: Կարծէք նա հարցնում էր Նեխլիւզովից—լաւ է անում ինքը, անպէս է անում, ինչպէս պէտք է:

«Այդպէս է, այդպէս», սիրելիս, ամեն բան լաւ է, ամեն բան հիանալի է, սիրում եմ քեզ»:

Նրանք իջան գաւթից և Նեխլիւզովը մօտեցաւ նրանց: Նա չէր ուզում համբուրուել Կատիւշայի հետ, այլ միայն ուզում էր մօտ լինել նրան:

—Քրիստոս յարեաւ ի մեռելոց,—կոացնելով գլուխը ու ժպտալով ասաց Մատրեօնա Պաւլօվնան ձայնի այնպիսի եղանակով, որ ասում էր, թէ այժմ ամենքը հաւասար են, և ձգուեց

դէպի նա ու շրթունքները մօտեցրեց նրան, նախապէս սրբելով բերանը մինաձև կոլորած թաշկինակով:

—Օրհնեա՛լ է յարութիւնն Քրիստոսի,—պատասխանեց Նելսլիւդովը, համբուրուելով:

Նա յետ նայեց Կատիւշային: Կատիւշան կարմրեց ու իսկոյն մօտեցաւ նրան:

—Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց, Դմիտրիյ Իվանովիչ:

—Օրհնեա՛լ է յարութիւնն Քրիստոսի,—ասաց Նելսլիւդովը: Նրանք համբուրուեցին երկու անգամ և կարծէք մտածեցին, թէ պէտք է արդեօք էլի համբուրուել, և կարծէք վճռելով, որ պէտք է, երրորդ անգամ համբուրուեցին ու երկուսն էլ ժպտացին:

—Ձէք գնա՛լ քահանայի մօտ,—հարցրեց Նելսլիւդովը:

—Ո՛չ, Դմիտրիյ Իվանովիչ, մենք կը նստենք այստեղ,—ասաց Կատիւշան, ամբողջ կրծքով, կարծէք զուարթ աշխատանքից յետոյ, ծանր շունչ քաշելով և նայելով ուղիղ նրա աչքերին իր հլու, կուսական, սիրող ու փոքր ինչ շիւ աչքերով:

Տղամարդու և կնոջ մէջ եղած սէրը միշտ ունենում է մի բոսկէ, երբ նա, հասնում է իր գազաթնակէտին, երբ նրա մէջ չը կայ ոչինչ գիտակցական ու դատողական և չը կայ նաև ոչինչ զգայական: Այդպիսի բոսկէ էր Նելսլիւդովի համար Յարութեան այդ գիշերը: Երբ նա այժմ միտքն էր բերում Կատիւշային, այն բոլոր դրութիւններից, որոնց մէջ նա տեսել էր Կատիւշային, այդ բոսկէն սքողում էր բոլոր միւս բոսկէները: Սև, կոկ ու փայլուն փոքրիկ գլուխ, փոթփոթաւոր սպիտակ զգեստ, որ քիփ պատում է նրա գեղակազմ կուսական իրանը ու ոչ բարձր կուրծքը, և՛ այդ կարմրութիւնը, և՛ այդ մեղմ, պսպղան սև աչքերը, և՛ այդ ամբողջ էութեան մէջ երկու գլխաւոր գծեր՝ սիրոյ կուսութեան մաքրութիւնը, սիրոյ՝ ոչ միայն դէպի ինքը, Նելսլիւդովը,—նա լաւ գիտէր այդ,—այլ դէպի ամեն մարդ և ամեն բան աշխարհում. ոչ միայն դէպի այն ամենը, ինչ որ լաւ է, այլ և դէպի այն աղքատը, որի հետ նա համբուրուեց:

Նելսլիւդովը գիտէր, որ Կատիւշայի մէջ կար այդ սէրը, որովհետև ինքն էլ այդ գիշեր և այդ առաւօտ գիտակցում էր իր մէջ նոյն սէրը, և գիտակցում էր, որ այդ սիրոյ մէջ ինքը ի մի է ձուլւում Կատիւշայի հետ:

Ա՛խ, երանի այդ բոլորը դադար առնէր այդ գիշերուայ ըզգացմունքի վրայ: «Այն, այդ զարհուրելի բանը կատարուեց ամբողջապէս այդ Յարութեան գիշերից յետոյ», մտածում էր նա այժմ, նստած պատուհանի մօտ երդուեալ դատաւորների սենեակում:

XVI

Նկեղեցուց վերադառնալով, Նեխլիւզովը թաթախուեց մօրաբոյրներին հետ ու կազդուրուելու համար, զօրագնդում ձեռք բերած սովորութեան համեմատ, օղի ու գինի խմեց և զնաց իր սենեակն ու իսկոյն առանց հանուելու քնեց: Նրան զարթեցրեց դռան թխթխկոցը: Թխթխկոցիցն իմանալով, որ Կատիւշան է այդ, նա տեղիցը բարձրացաւ, աչքերը տրորելով ու ճրմկոտալով: — Դ՞ն էս, Կատիւշա: Մտիր, — ասաց նա վեր կենալով: Կատիւշան բացեց դուռը ու նրա արանքով ասաց. — Կանչում են ձաշի:

Նա նոյն սպիտակ զգեստովն էր, բայց մազերը կապած չէին ժապաւէնով: Նայելով Նեխլիւզովի աչքերին մէջ, նա պայծառացաւ, կարծես թէ մի ինչ-որ արտասովոր ուրախ բան էր իր հաղորդածը:

— Այս րոպէիս գալիս և՛մ, — պատասխանեց Նեխլիւզովը, վերցնելով սանրը մազերը սանրելու համար:

Կատիւշան մի րոպէ աւելորդ կանգնած մնաց: Նեխլիւզովը նկատեց այդ և, դէն շարտելով սանրը, զնաց նրա կողմը: Բայց նա իսկոյն և եթ շուռ եկաւ ու իր սովորական արագ և թեթև քայլերով հեռացաւ միջանցքի փողոցի վրայով:

«Ի՞նձ պէս էլ յիմար մօրդ կը լինի», — ասաց Նեխլիւզովը ինքն իրան. — «ինչո՞ւ չը պահեցի նրան»:

Եւ վազէվազ հասաւ նրա յետևից միջանցքում:

Ի՞նչ էր ուզում նա նրանից, այդ ինքն էլ չը գիտէր: Բայց նրան թւում էր, որ երբ նա մտաւ իր սենեակը, ինքը պէտք է անէր մի բան, որ այդպիսի դէպքերում ամենքն անում են, իսկ ինքը չարեց:

— Կնց, Կատիւշա, — ասաց նա:

Կատիւշան յետ նայեց:

— Ի՞նչ էք ուզում, — ասաց նա, ոտը կախ քցելով:

— Ոչինչ, միայն...

Եւ ճիգ դործ զնելով իր վրայ ու մտաբերելով, թէ ինչ պէս են մարդիկ առհասարակ վարւում այդպիսի դրութեան մէջ, նա ձեռքը քցեց Կատիւշայի մէջքովը:

Աղջիկը կանգ առաւ ու նայեց նրա աչքերի մէջ:

— Ձէ, Դմիտրիյ Իվանովիչ, չէ, — ասաց նա, կարմրելով ու լացակրկնելով, և իր բիրտ ու ուժեղ ձեռքով հեռացրեց մէջքովը փափաթուած ձեռքը:

Նեխլիւզովը բաց թողեց նրան և մի րոպէ ոչ միայն վատ

զգաց իրան ու ամաչեց, այլ և ուղղակի զգուելի թուաց ինքն իրան: Նա իսկապէս պէտք է այդ ժամանակ հաւատար ինքն իրան, իր այդ ներքին ձայնին. բայց նա չը հասկացաւ, որ իրան վատ զգալն ու ամաչելը իր հոգու ամենալաւ զգացմունքներն էին, որոնք պահանջ էին զգում արտայայտուել, այլ, ընդհակառակը, նրան թուաց, թէ իր այդ զգացմունքների պատճառը յիմարութիւնն է և թէ պէտք է վարուել այնպէս, ինչպէս վարուում են բոլորը:

Նա նորից հասաւ Կատիւշայի յետեից, նորից գրկեց նրան ու այս անգամ համբուրեց նրա վիզը: Այդ համբոյրը արդէն ամենեւին նման չէր առաջուան այն երկու համբոյրներին, — առաջին անգիտակցական համբոյրին՝ եզրեանիի թփի յետևում, և երկրորդ համբոյրին՝ այդ նոյն օրը առաւօտեան եկեղեցում: Այս համբոյրը սարսափելի էր, և Կատիւշան զգաց այդ բանը:

— Այս ինչ արեցիք, — բացականչեց նա այնպիսի ձայնով, կարծէք թէ Նեխլիւզովը փշրեց ինչ-որ անհուն թանկագին բան, — և արագ-արագ վազելով փախաւ:

Նեխլիւզովը գնաց սեղանատուն: Չուզուած մօրաբոյրները և բօխչին ու հարեանուհին կանգնած էին նախաճաշի սեղանի մօտ: Ամեն ինչ վերին աստիճանի սովորական էր, բայց Նեխլիւզովի հոգու մէջ փոթորիկ էր տիրում: Նա ոչինչ չէր հասկանում. երբ հետը խօսում էին, անտեղի պատասխաններ էր տալիս և մտածում էր միմիայն Կատիւշայի մասին, մտաբերելով այն զգացողութիւնը, որ ինքը ունեցաւ վերջին անգամ միջանցքում նրան համբուրելիս: Նա չէր կարողանում մտածել ոչ մի ուրիշ բանի մասին: Երբ Կատիւշան մտնում էր սեղանատուն, նա, առանց նայելու նրան, իր ամբողջ էութեամբ զգում էր նրա ներկայութիւնը և ստիպուած էր ճիգ գործ գնել իր վրայ, որպէս զի չը նայեր նրան:

Ճաշից յետոյ Նեխլիւզովը իսկոյն գնաց իր սենեակը և ստտորիկ յուզուած դրութեան մէջ երկար գնում գալիս էր սենեակում, ականջ դնելով տան մէջ լսուող ձայներին և սպասելով Կատիւշայի քայլերին: Այն անամնական էակը, որ սպբում էր նրա մէջ, ոչ միայն բարձրացրել էր այժմ գլուխը, այլ և ոտնակոխ էր արել այն հոգեկան «եռ»-ը, որ նրա էութիւնն էր կազմում ոչ միայն այն ժամանակ, երբ նա առաջին անգամն էր եկել այդտեղ, այլ և նոյն իսկ հէնց այս առաւօտ և կեղեցում: Այդ անառնական էակը այժմ միահեծան իշխում էր նրա ներքին աշխարհում: Չը նայելով, որ Նեխլիւզովը շարունակ աչքը Կատիւշայի յետեիցն էր պահում, սակայն այդ օրը

չը կարողացաւ ոչ մի անգամ յաջողեցնել պատահել նրան մէն-մենակ: Երևի, աղջիկը խուսափում էր նրանից: Բայց իրիկնա-դէմին այնպէս պատահեց, որ Կատիւչան պէտք է գնար նրա սենեակի կողքի սենեակը: Բժիշկը մնացել էր գիշերելու, և նա պէտք է տեղեր քցէր այդ հիւրի համար: Լսելով նրա ստնա-ձայնը, Նելսիւդովը, յուշիկ քայլերով և շունչը բռնած, կարծես յանցանք գործելու պատրաստուելով, մտաւ նրա յետեից սե-նեակը:

Մաքուր բարձի երեսի մէջ խրած երկու ձեռքովը բարձի անկիւնները բռնած, Կատիւչան յետ նայեց նրան ու ժպտաց, բայց ոչ առաջուան պէս ուրախ ու զուարթ, այլ վախուորած, աղիոզորմ ժպիտով: Այդ ժպիտը կարծես ասաց նրան, թէ նրա արածը վատ բան է: Մի բողբէ նա կանգ առաւ: Այդտեղ դեռ հնարաւորութիւն կար մաքառելու: Թէև թոյլ, բայց դեռ լըս-ւում էր դէպի այդ աղջիկը զգացած իսկական սիրոյ ձայնը, որ շնչում էր Նելսիւդովին այդ աղջկայ մասին, նրա զգացմունք-ների մասին, նրա կեանքի մասին: Մի ուրիշ ձայն էլ ասում էր Նելսիւդովին.—տես, ձեռքիցդ բաց կը թողնես քո զուարճու-թիւնը, քո բախտաւորութիւնը: Եւ այդ երկրորդ ձայնը խեղ-դեց ատաղինը: Նելսիւդովը վճռական կերպով մտեցաւ Կատիւ-չային: Եւ նրան տիրեց սարսափելի, անզուսպ անասնական զգացմունքը:

Առանց աղջկան գրկիցը բաց թողնելու, Նելսիւդովը նըս-տացրեց նրան անկողնի վրայ և, զգալով, որ դեռ մի բան էլ պէտք է անել, ինքն էլ նստեց նրա կողքին:

—Դմիտրիյ Իվանովիչ, հողիս, բաց թողէք, խնդրեմ,—ա-սում էր նա աղիոզորմ ձայնով:—Մատրեօնա Պաւլովնան գալիս է,—բացականչեց նա, դուրս պրծնելով նրա ձեռքից:

Յիրաւի մէկը մօտենում էր դռանը:

—Որ այդպէս է, գիշերը կը գամ մօտդ,—ասաց Նելսիւ-դովը:—Դու մենակ ես, չէ:

—Ի՞նչ էք ասում: Չէ, չէ, չը դաք. չի ուղի,—ասում էր Կատիւչան, բայց միայն բերանով, իսկ նրա յուզուած, այլայլուած ամբողջ էութիւնը ուրիշ բան էր ասում:

Դռանը մօտեցողը, ճիշտ որ, Մատրեօնա Պաւլովնան էր: Նա մտաւ ներս, մի վերմակ քցած կոսանք, և, յանդիմանօրէն նայելով Նելսիւդովի վրայ, բարկացած նկատողութիւն արեց Կատիւչային, որ ուրիշ վերմակ էր վերցրել:

Նելսիւդովը անխօս դուրս եկաւ: Նա նոյն իսկ ամօթ չէր զգում: Նա տեսաւ Մատրեօնա Պաւլովնայի դէմքի արտայայ-

տութիւնից, որ նա դատապարտում է իրան, և գիտէր, որ նա իրաւունք ունի դատապարտել իրան, գիտէր, որ իր արածը վատ բան է, բայց զէպիլ Կատիւչան տածած առաջուան լաւ սիրոյ զգացմունքից ազատուած անասնական կիրքը տիրել էր նրան և իշխում էր միայնակ ու չէր ուզում ձանաչել ոչ մի բան, բացի իրանից: Նա գիտէր այժմ, թէ ինչ պէտք է անել կիրքը յազնցնելու համար, և հնարք էր փնտռում այդ անելու համար:

Ամբողջ երեկոն նա քշուածի նման էր. մէկ մտնում էր մօրաքոյրներին սենեակը, մէկ էլ դուրս էր գալիս դնում իր սենեակին ու պատշգամբը, և միայն այն էր մտածում, թէ ինչպէս անէ, որ Կատիւչային մէն-մենակ տեսնի. բայց համ Կատիւչան էր խուսափում նրանից, համ էլ Մատրեօնա Պաւլօֆնան աչքը միշտ Կատիւչայի վրայ էր պահում:

## XVII

Այգպէս անցաւ ամբողջ երեկոն և վրայ հասաւ գիշերը: Բժիշկը գնաց քնելու: Մօրաքոյրները պատրաստուում էին պառկելու: Նեխիլուգօվը գիտէր, որ Մատրեօնա Պաւլօֆնան այժմ մօրաքոյրներին ննջարանումն է, և Կատիւչան մենակ է ազախինների սենեակում: Նա նորից դուրս եկաւ պատշգամբը: Դրսեր մութն էր, խոնաւ ու տաք, և օդի մէջ կանգնած էր այն սպիտակ մշուշը, որ գարնանը հալցնում է վերջին ձիւնը կամ տարածւում է վերջին ձիւնի հալքից: Գետի կողմից, որ հոսում էր հարիւր քայլաչափ հեռու տան առջեի զառիվայրի տակով, լըսւում էին տարօրինակ ձայներ, — սառուցը ձաքում էր:

Նեխիլուգօվը իջաւ պատշգամբից և, անցնելով սառուց կտրած ձեան վրայ լճացած ջրերի միջով, մօտեցաւ ազախինների սենեակի պատուհանին: Սիրտը այնպէս էր տփափում կրծքումը, որ նա լսում էր ձայնը. շունչը մէկ ընդունում էր, մէկ էլ դուրս պրծնում ծանր հոգոցով: Սենեակում փոքրիկ լամպ էր վառուում: Կատիւչան, մտածմունքի մէջ ընկած, մենակ նստած էր սեղանի մօտ ու նայում էր իր առջևը: Նեխիլուգօվը երկար, ստանց իրար գալու, նայում էր նրան, կամենալով իմանալ, թէ ինչ է անելու նա, ենթադրելով, թէ ոչ որ չի տեսնում իրան: Մէկ երկու րոպէ նա մտաց անշարժ նստած, յետոյ լարձրացրեց աչքերը, ժպտաց, գլուխը, կարծես ինքն իր վրայ, յանգիմանօրէն թափ տուեց և, փոխելով դիրքը, թափով ձեռքերը դրեց սեղանի վրայ ու աչքերը սենեց զէպիլ առաջ:

Նեխիլուգօվը կանգնած նայում էր նրան և ակամայ լսում

միասին և՛ իր սրտի տրփտրփոցը, և՛ գետից եկող տարօրինակ ձայները: Այնտեղ գետի երեսին, մշուշի մէջ ինչ-որ անընդհատ ու դանդաղ աշխատանք էր կատարուում և ինչ-որ մերթ խըզ-խզում էր, մերթ ձոնչում, մերթ փչրում, կամ թէ սպակու նման զրնգում էին բարակ սառցակտորները:

Նա կանգնած նայում էր Կատիւշայի մտանոգ, ներքին մաքառումից տանջուող դէմքին, և նրա խեղճը գալիս էր Կատիւշայի վրայ: Բայց, զարմանալի բան, այդ խղճահարուժիւնը միմիայն սաստկացնում էր նրա վերաբերմամբ զգացած տենչը:

Նա թխթխկացրեց պատուհանը: Կատիւշան, կարծես էլեքտրական հարուածից, ցնցուեց ամբողջ մարմնով և սարսափ երևաց նրա երեսին: Յետոյ նա վեր թռաւ տեղից, մօտեցաւ պատուհանին և երեսը մօտեցրեց ապակուն: Սարսափի արտայայտութիւնը շանցաւ նրա դէմքից և այն ժամանակ, երբ նա, երկու ձեռքը ձիւ աչքակալների նման աչքերին դնելով, ճանաչեց Նեխլիւզովին: Նրա դէմքը չափից վեր լուրջ էր, — Նեխլիւզովը երբէք չէր տեսել նրան այդպէս: Կատիւշան ժպտաց միայն այն ժամանակ, երբ Նեխլիւզովը ժպտաց, — ժպտաց միմիայն կարծես հպատակուելով նրան, բայց իր հոգու մէջ ժպիտ չը կար, այլ կար միայն սարսափ: Նեխլիւզովը ձեռքով նշան արեց նրան, որ դուրս գայ իր մօտ: Բայց նա գլուխը թափ տուեց՝ թէ չէ, դուրս չի գալ, և մնաց կանգնած պատուհանի մօտ: Նեխլիւզովը մէկ էլ երեսը մօտեցրեց ապակուն, ուզելով գոռալ, որ նա դուրս գայ, բայց այդ ժամանակ նա շուռ եկաւ դէպի դուռը, — անշուշտ կանչող եղաւ նրան: Նեխլիւզովը հեռացաւ պատուհանից: Մշուշը այնքան թանձր էր, որ, տանից հինգ քայլ հեռացած, Նեխլիւզովը այլ ևս չէր տեսնում պատուհանը, այլ նշմարում էր միայն սևին տուող մի զանգուած, որի միջից լոյս էր արձակում լամպի կարմրագոյն ցոլքը, որ ահագին էր թւում: Գետի երեսին շարունակուում էր սառուցի նոյն տարօրինակ խըզ-խզոցը, խշխշոցը, ձոնչիւնը և զրնգոցը: Մի մօտակայ բակից մըշուշի մէջ կանչեց մի աքաղաղ, մօտեկբում ձայն տուեցին ուրիշները և հեռուից, գիւղի միջից, լսուեցին միմեանց ընդհատող և ի մի ձուլուող աքլորականչեր: Շուրջը ամեն ինչ, բացի գետից, բոլորովին խաղաղ էր: Աքաղաղների երկրորդ կանչն էր այդ:

Տան միւս կողմում մէկ-երկու անգամ յետ ու առաջ դնալ գալուց և մի քանի անգամ օտը ջուրն ընկնելուց յետոյ, Նեխլիւզովը նորից մօտեցաւ աղախինների սենեակի պատուհանին: Լամպը դեռ վառուում էր, և Կատիւշան, էլի մնակ նստած սև-

դանի մօտ, կարծես վարանման մէջ էր: Հէնց որ Նեխլիւզօվը մօտեցաւ պատուհանին, Կատիւշան աչքը քցեց այն կողմը: Նեխլիւզօվը թխթխկացրեց: Կատիւշան, առանց նայելու, թէ ով է թխթխկացնողը, իսկոյն դուրս վազեց սենեակից, և Նեխլիւզօվը լսեց, թէ ինչպէս պոկ գալով բացուեց ու յետոյ ճոռաց ելքի դուռը: Նա արգէն սպասում էր Կատիւշային սրահի մօտ և իսկոյն առանց խօսելու գրկեց նրան: Կատիւշան սղմուեց նրան, բարձրացրեց գլուխը և շրթունքներով հանդիպեց նրա համբոյրը: Նրանք կանգնած էին սրահի անկիւնի յետևում հալուած ու չորացած տեղում, և Նեխլիւզօվը ամբողջապէս տոգորուած էր տանջող, յագուրդ չը ստացած ցանկութեամբ: Յանկարծ նորից նոյն կերպով ճփփաց ու նոյն ձայնով ճոռաց ելքի դուռը, և լսուեց Մատրեօնա Պաւլօվնայի բարկացած ձայնը.

— Կատիւշա:

Աղջիկը դուրս պրծաւ Նեխլիւզօվի գրկից ու վերադարձաւ իրանց սենեակը: Նեխլիւզօվը լսեց, թէ ինչպէս չիկաց դռան փականքը: Յետոյ ամեն ինչ խաղաղուեց, պատուհանի մէջից երևացող աչքանման կարմիր լոյսը չքացաւ և մնաց միայն մշուշն ու գետի խլրտումը:

Նեխլիւզօվը մօտեցաւ պատուհանին, — ոչ ոք չէր երևում: Նա թխթխկացրեց, — ոչ մի պատասխան չեղաւ: Նեխլիւզօվը վերադարձաւ տուն արտաքին պատշգամբով, բայց չը պտոկեց քնելու: Նա կօշիկները հանեց ու ստարորիկ գնաց միջանշքով դէպի Կատիւշայի դուռը, որ Մատրեօնա Պաւլօվնայի սենեակի կողքին էր: Սկզբում, լսելով, որ Մատրեօնա Պաւլօվնան հանգիստ խոռացնում է, նա ուղում էր ներս մտնել, բայց յանկարծ պառաւը սկսեց հազալ և շուռ եկաւ ճոռան անկողնակալի վրայ: Նեխլիւզօվը սսկուեց և այդպէս մի հինգ րոպէ մնաց կանգնած: Երբ նորից ամեն ինչ հանդարտուեց և դարձեալ լսուեց Մատրեօնա Պաւլօվնայի հանգիստ խոխոցը, նա, աշխատելով քայլել այն տախտակների վրայով, որոնք չէին ճոճոտում, առաջ գնաց և մօտեցաւ Կատիւշայի դռանը: Ամեն ինչ խաղաղ էր: Կատիւշան, անշուշտ, քնած չէր, որովհետև չէր լսում նրա շնչատութեան ձայնը: Հէնց որ Նեխլիւզօվը շնչաց՝ «Կատիւշա», նա վեր թըռաւ, մօտեցաւ դռանը և, ինչպէս Նեխլիւզօվին թուաց, բարկացած ձայնով սկսեց համոզել նրան, որ թողնի գնայ:

— Այդ ինչ բան է: Այդպէս բան կարելի է: Մօրաքոյրները կը լսեն, — ասում էին նրա շրթունքները, բայց նրա ամբողջ էութիւնը ասում էր, — Ես քոնն եմ ամբողջովին:

Եւ Նեխլիւզօվը միայն այդ էր հասկանում:

—Դէ, մի բոսկէով բանց արա դուռը: Խնդրում եմ, աղա-  
չում եմ,—ասում էր նա անխմաստ խօսքեր:

Կատիւչան լսեց, յետոյ լսուեց փականքը վնտոող ձեւքի  
քարտոց: Փականքը չըսկաց, և Նեխիլուգովը ներս սարդեց բա-  
ցուած դռան մէջով:

Նա գրկեց Կատիւչային և այնպէս, ինչպէս որ կար,—ան-  
թափ դեղնագոյն շապիով ու բաց կոնկրով,—բարձրացրեց ու  
տարաւ:

—Ա՛խ: Ի՞նչ էք անում,—չնշում էր Կատիւչան:

Բայց Նեխիլուգովը, առանց ուշք դարձնելու նրա խօսքերին,  
տանում էր նրան իր սենեակը:

—Ա՛խ, չի ուզի, չի ուզի, թողէք,—ասում էր աղջիկը,  
բայց ինքը սղմուում էր նրան:

Երբ Կատիւչան, գողգոջուն ու լուռ, առանց ոչինչ պա-  
տասխանելու նրա խօսքերին, հեռացաւ նրա սենեակից, նա  
դուրս եկաւ պատշգամբը և կանգ առաւ, աշխատելով պարզել  
իր համար՝ կատարուածի նշանակութիւնը:

Դրսեր մի քիչ լուսացել էր. ներքեւում, գետի կողմը, սառ-  
ցակտորների ճանչոցը, զրնգոցը ու խզխզոցը աւելի ևս սաստկա-  
ցել էին, և առաջուան ձայներին աւելացել էր ջրի խոխոջիւնը:  
Մշուշը սկսել էր նստել և մտախտուղի պարսպի յետեից դուրս  
էր սահում նուազած լուսինը, մռայլ կերպով լուսաւորելով ինչ-  
որ մի սև ու անուղի բան:

«Ի՞նչ էր այդ. մեծ ըսխատուորութիւն պատահեց ինձ, թէ  
մեծ անբախտութիւն», հարցնում էր Նեխիլուգովը ինքն իրան:—  
«Միշտ այդպէս է լինում, ամենքն այդպէս են անում», ասաց  
նա ինքն իրան և դնաց քնելու:

### XVIII

Միւս օրը փայլուն և զուարթ Շէնքօղը եկաւ Նեխիլուգովի  
մօրաբոյրներին մօտ նրան տանելու և բոլորովին յափշտակեց  
նրանց իր շնորհալիութեամբ, սիրալիրութեամբ, ուրախու-  
թեամբ, առատաձեռնութեամբ և դէպի Դմիտրին տածած սիրով:  
Նրա առատաձեռնութիւնը թէև շատ դուր եկաւ մօրաբոյրներին,  
բայց փոքր ինչ ապշեցրեց նրանց իր չափազանցութեամբ: Եկած  
կոյր աղքատներին նա մի-մի ոտւրջի տուեց, ծառաներին 15  
ոտւրջի «Թէյադրամ» բաշխեց և երբ Սօֆիա Իվանովնայի չնիկի,  
Սիւղէտկայի սոռը նրա մօտ քերձուեց ու արիւնլուայ եղաւ,  
նա առաջ ընկաւ վէրքը կապելու և, առանց մի բոսկէ վարանե-  
լու, պատուոց իր երիզաւոր բատիստէ թաշկինակը (Սօֆիա Ի-

վանօջան գիտէր, որ այդպիսի թաշկինակներ թասներկուսը ամենաքիչը 15 ուրբի արժէ) ու վերականգնեց շինեց նրանից Սիւղէտկայի համար: Մօրաքոյրները գեռ այդպիսի մարդիկ չէին տեսել և չը գիտէին, թէ այդ Շէնքօկը 200 հազարից աւելի պարտք ունի, որ նա—այդ ինքը լաւ գիտէր—երբէք չէր վճարելու, և թէ այդ պատճառով 25 ուրբի աւել կամ պակաս նրա համար ոչինչ նշանակութիւն չունէր:

Շէնքօկը միայն մի օր մնաց և հետեւեալ գիշերը գնաց Նեխլիւզօվի հետ միասին: Նրանք չէին կարող աւելի երկար մնալ, որովհետեւ իրանց զօրագունգը գնալու վերջին պայմանաժամը արդէն լրանում էր:

Նեխլիւզօվի հոգու մէջ մօրաքոյրների մօտ անցրած այդ վերջին օրը, երբ գեռ թարմ էր գիշերուան յիշատակը, զարթնում էին և կուռւմ իրար հետ երկու զգացմունք,—մի կողմից՝ այրող, զգայական յիշողութիւններ՝ անամնական սիրոյ, որ սակայն չէր տուել նրան այն բոլորը, ինչ որ խոստանում էր, և մի որոշ չափով ինքնաբաւականութեան, որ կարողացել էր հասնել իր նպատակին. միւս կողմից՝ գիտակցութիւն, որ ինքը ինչ որ շատ վատ բան է արել, և որ այդ վատ բանը պէտք է ուղղել, և ուղղել ոչ թէ այն աղջկայ, այլ իր օգտի համար:

Խելագարութեան հասցրած կսամոլութեան այն վիճակում, որի մէջ գտնուում էր Նեխլիւզօվը, նա մտածում էր միմիայն իր մասին,—այն բանի մասին, թէ արդեօք կը մեղադրեն իրան և ինչ աստիճան, եթէ իմանան, թէ ինչպէս էր ինքը վարուել նրա հետ, և ամենին չէր մտածում այն բանի մասին, թէ ինչ էր զգում այն աղջիկը և ինչ է լինելու նրա հետ:

Նա մտածում էր, թէ Շէնքօկը երկի գուշակում է իր ու կատիւչայի յարաբերութիւնները, և այդ շոյում էր նրա ինքնասիրութիւնը:

—Մշտ է պատճառը, որ դու յանկարծ սկսել ես այնքան սիրել մօրաքոյրներին, որ մի շարաթ մնացել ես մօտները, —ասաց նրան Շէնքօկը, տեսնելով կատիւչային:—Ես էլ որ քո տեղը լինէի, չէի գնաց: Հիանալի բան է:

Նեխլիւզօվը մտածում էր և այն, որ թէև ասիտս է հեռաձայն ալիս, առանց լիովին վայելելու իրանց սիրոյ զուարճութիւնները, սակայն գնալը ձեռնատու է այն կողմից, որ զբանով միանգամայն խզուում էին այդ նոր յարաբերութիւնները, որ ինքը անկարող կը լինէր պահպանել ապագայում: Մտածում էր և այն, որ պէտք է աղջկան փող տալ, ոչ թէ նրա օգուտը ի նկատի ունենալով, ոչ այն պատճառով, որ նրան այդ փողը կարող է հարկաւոր լինել, այլ որովհետեւ այդպէս են միշտ անում: Եւ

նա տուեց նրան այնքան փող, որքան վայելուչ էր համարում նայելով իր և նրա դիրքին:

Ուղեորման օրը, ձաշից յետոյ, նա Կատիւչայի ճանապարհը պահեց սրահուով: Կատիւչան կարմրատակեց՝ նրան տեսնելով և աչքով աղախինների սենեակի դուռը ցոյց տալով՝ ուզեց կողքով անցնել, բայց նեխլիւզովը կանգնեցրեց նրան:

— Ուզում էի մնաս բարե անել, —ասաց նա, ճմլելով ձեռքում՝ մէջը հարիւր ուռլիանոց դրած մի ծրար: — Ահա ես...

Կատիւչան գլխի ընկաւ, խոփոտուեց, գլուխը թափ տուեց և յետ հրեց նրա ձեռքը:

— Չէ, վեր առ, — մրթմրթաց նեխլիւզովը ու ծրարը խրեց նրա կոնատակը և, այնպէս խոփոտուելով ու հառաչելով, կարծեա թէ ձեռքը դադուեց, վազեց իր սենեակը:

Եւ այնուհետեւ երկար ժամանակ նա անդադար գնում գալիս էր իր սենեակում, և կծկում էր, և նոյն իսկ ցատկում ու բարձրաձայն հառաչում, — ասես Ֆիլիկական ցաւից, — հէնց որ յիշում էր այդ տեսարանը:

Բայց ի՞նչ արած: Միշտ այդպէս է լինում: Այդպէս է վարուել Շէնքօղը այն դատարարակշուհու հետ, որի մասին պատմում էր ինքը, այդպէս է վարուել Գրիշա հօրեղբայրը, այդպէս է վարուել իր հայրը, երբ նա ապրելիս է եղել գիւղում և նրանից ծնուել է այն ապօրինի դաւակը, Միտենկան, որ այժմ էլ դեռ կենդանի է: Իսկ եթէ բոլորն էլ այդպէս են անում, կը նշանակի այդպէս էլ պէտք է լինի: Այդպէս էր աշխատում նա մխիթարել ինքն իրան, բայց ոչ մի կերպ չէր կարողանում մխիթարուել: Այդ յիշողութիւնը դադում էր նրա խիղճը:

Հոգու խորքում, ամենահեռաւոր խորքում, նա գիտէր, որ ինքը վատ, լիրբ ու անսիրտ բան է արել, որ ինքը այդ տեսակ վարուած լինելու գիտակցութեամբ ոչ միայն չի կարող այլ ևս դատապարտել ու՞մ և իցէ, այլ և չի կարող ուղիղ նայել ուրիշների երեսին, էլ մի կողմ թողած այն, որ նա չի կարող այլ ևս հիանալի, ազնիւ ու մեծանոգի երիտասարդ համարել ինքն իրան, ինչպէս համարում էր առաջ: Իսկ նա կարիք ունէր այդ համարումն ունենալու իր մասին, որպէս զի կարողանար շարունակել ապրել առողջ և ուրախ: Դրա համար էլ մի հնարք կար միայն, — չը մտածել այդ բանի մասին: Այդպէս էլ արեց նա:

Այն կեանքը, որ նա այժմ վարելու էր, — նոր տեղեր, ընկերներ, պատերազմ, — նպատաւոր էր այդ բանին: Եւ որքան նա աւելի էր ապրում, այնքան աւելի էր մոռանում իր արածը և, ի վերջոյ, իրօք, բոլորովին մոռացաւ:

Միայն մի անգամ, երբ, պատերազմը վերջանալուց յետոյ, Կատիւչային տեսնելու յոյսով նա դնաց մօրաքոյրների մօտ և իմացաւ, որ այդ աղջիկը այլ ևս նրանց մօտ չէ, որ նա, իր գնալուց յետոյ շատ չանցած, հեռացել էր նրանց մօտից երեխայ բերելու համար, և յիրաւի ազատուել էր մի տեղ և, ինչպէս լսել էին մօրաքոյրները, բոլորովին փչացել էր, — նրա սիրտը ձախուց: Ազատուելու ժամանակին նայելով, նրա բերած երեխան կարող էր իրանից լինել, բայց կարող էր և իրանից չը լինել: Մօրաքոյրներն ասում էին, թէ նա փչացել է և անառակ ընաւորութեան տէր է, ինչպէս էր և նրա մայրը: Եւ մօրաքոյրների այդ գատապարտութիւնը ակտրօնի էր Նելիլիւզովին, որովհետեւ կարծես թէ արգարայնում էր նրան: Սկզբում այնուամենայնիւ նա ուզում էր գտնել Կատիւչային ու երեխային, բայց յետոյ, հէնց այն պատճառով, որ հողու խորքում նա սաստիկ ամօթ ու ցաւ էր զգում այդ բանի մասին մտածելիս, նա, ինչպէս հարկն է, ջանք չարեց նրանց գտնել, և աւելի ևս մոռացաւ իր գործած մեղքը ու դադարեց նոյն իսկ մտածելուց նրա մասին:

Բայց ահա այժմ այս զարմանալի գուգադիպութիւնը յիշեցրեց նրան ամեն ինչ և հարկադրում էր նրան խոստովանել իր անսրտութիւնը, անգթութիւնը և լրբութիւնը, որոնք հնարաւորութիւն էին տուել նրան հանգիստ ապրել այդ տաս տարուայ ընթացքում այդպիսի մեղք ունենալով իր խղճմտանքի վրայ: Բայց նա դեռ հեռու էր այդ խոստովանութիւնն անելուց և այժմ մտածում էր միայն այն մասին, թէ մի գուցէ իսկոյն ամեն բան իմացուի, և Կատիւչան կամ նրա փաստաբանը պատմեն ամեն ինչ ու խայտառակեն նրան ամենքի առաջ:

## XIX

Այդպիսի հոգեկան վիճակի մէջ էր Նելիլիւզովը դատարանի դահլիճից երդուեալ ատենակալների սենեակը դնացած ժամանակը: Նա նստած պատուհանի մօտ, լսում էր իր շուրջը տեղի ունեցող խօսակցութիւնները և ծխում անընդհատ:

Ուրախ վաճառականը, ակներկաբար, ամբողջ հողով համակրում էր Սմելիով վաճառականի ժամանցի եղանակին:

— Ի՞նչ և՛ ասել, եղբայր. թունդ քէֆ է արել, իսկ սիրբրեցու նման: Բերնումն էլ համ է ունեցել. տես, ի՞նչ սիրուն աղջկայ վրայ է տաքացել:

Աւագը ինչ-որ նկատումներ էր առաջ բերում, ապացույցանելով, թէ ամեն բան կախուած է էքսպերտիզայից: Պետր

Գերասիմովիչը ինչ-որ կատակ էր անում հրէայ գործակատարի հետ, և նրանք ինչ-որ բանի վրայ սկսեցին հռնոպ: Նեխլիւզովը միայնակ խօսքերով էր պատասխանում իրան ուղղուած հարցերին և մի բան էր միայն ցանկանում, որ հանգիստ թողնեն իրան:

Երբ դատական պրիտաւը իր կողքանան քայլուածքով եկաւ ու նորից նիստի դահլիճը հրաւիրեց երգուեալ ատենակալներին, Նեխլիւզովը այնպիսի երկիւղ զգաց, կարծես թէ ինքը չէր գնում դատելու, այլ իրան էին տանում դատեն: Հոգու խորքում նա զգում էր արդէն, թէ ինքը մի լիբր մարդ է, որ պէտք է ամաչի մարդկանց երեսին նայելուց, և սակայն, ըստ սովորութեան, նա իր մշտական ինքնավստան շարժումներով վեր ելաւ բարձրութեան վրայ և նստեց իր տեղը,—որ երկրորդն էր աւագից յետոյ,—ոտը ստի վրայ քցելով ու պէսնսէն ձեռքին խաղայնելով:

Մեղադրեալներին էլ ուր որ տարել էին և հէնց նոր յետ բերեցին:

Դանլիճում նոր մարդիկ կային—վկաները, և Նեխլիւզովը նկատեց, որ Մասլովան մի քանի անգամ նայեց,—կարծես թէ չը կարողանալով աչքը հեռացնել,—մի շատ պծնուած, մետաքսի ու թաւիչի մէջ կորած, հաստ կնոջ վրայ, որ, մեծ հանդոյցաւոր բարձր գլխարկը գլխին և գողարիկ սիդիկիւլը արմնկահան բաց կոանը, նստած էր վանդակի այս կողմը առաջին կարգում: Դա, ինչպէս Նեխլիւզովը յետոյ իմացաւ, վկայ էր և այն անառակատան տիրուհին, ուր ապրում էր Մասլովան:

Սկսուեց վկաների հարց ու փորձը,—անունները, դաւանութիւնները և այլն: Յետոյ, կողմերին հարցնելուց յետոյ, թէ ինչպէս են նրանք կամենում հարցուփորձ անել՝ երգուեցնելով, թէ առանց երգուեցնելու, նորից եկաւ, դժուարութեամբ փոխելով ոտները, միևնոյն ձեր քահանան, և նորից միևնոյն կերպով չիտիկելով ոսկէ խաչը մետաքսապատ լանջի վրայ, նոյնպիսի հանդատութեամբ ու վստահութեամբ երգուեցրեց վկաներին և էքսպէրտին: Երբ որ երգումը պրծաւ, ըզրոր վկաներին տարան, թողնելով միայն մէկին, այն է Կիտակեւային, այն անառակատան տիրուհուն, ուր ապրում էր Կատիւչան: Նրան հարցրին, թէ ինչ գիտէ նա այդ գործի մասին: Կիտակեւան, չինձու ժպիտով և ամեն նախադասութեանը գլուխը սուղելով գլխարկի մէջ, մանրամասնօրէն ու տեղնուտեղին պատմեց իր իմացածը գերմանական արտաբերութեամբ:

Նախ և առաջ նրա մօտ եկել էր հիւրանոցի ծանօթ ծառայ Սիմօնը աղջիկներից մէկին տանելու մի հարուստ սիրիբեցի

վաճառականի համար: Ինքը ուղարկել էր կանչելու Լիւբաշային: Մի ժամանակից յետոյ Լիւբաշան վերադարձել էր վաճառականի հետ միասին: Վաճառականի կատարը արդէն տաքացած էր, — թեթեւ ժպտալով, ասում էր Կիտանեվան, — մեր մօտ էլ շարունակեց խմել ու հիւրասիրել աղջիկներին, բայց որովհետեւ փողը պակասեց, նա ուղարկեց իր համարը այդ նոյն Լիւբաշային, դէպի որը նախամտնաբութիւն էր զգում, — ասաց նա, նայելով մեղադրեալ Մասլովայի վրայ:

Նեխլիւզովին թուաց, թէ Մասլովան այդ ժամանակ ժրպտաց, և այդ ժպտը զգուելի թուաց նրան: Նրա սրտում զարթնեց զգուանքի տարօրինակ, անորոշ զգացմունք, խառն կարեկցութեան հետ:

— Իսկ ինչ կարծիք ունէիք դուք Մասլովայի մասին, — կարմրելով ու վախովսելով հարցրեց Մասլովայի պաշտպանը, որ դատական պաշտօնների թեկնածուներից էր և դատարանի կողմից էր նշանակուած:

— Ս.մնալաւ կարծիք, — պատասխանեց Կիտանեվան, — ուսում առած աղջիկ էր և շիկով: Նա կրթուել է լաւ ընտանիքում և գիտէ ֆրանսերէն կարգալ: Մի-մի անգամ չափից աւել էր խմում, բայց սչ մի ժամանակ իրան չէր կորցնում: Շատ լաւ աղջիկ էր:

Կատիւչան նայում էր Կիտանեվայի վրայ, բայց յետոյ յանկարծ աչքերը դարձրեց երզուեալ դատաւորների կողմը ու յանց Նեխլիւզովի վրայ, և նրա դէմքը լուրջ և նոյն իսկ խիստ արտայայտութիւն ստացաւ: Նրա խտտահայեաց աչքերից մէկը շլում էր: Բաւական երկար ժամանակ յառած մնացին Նեխլիւզովի վրայ այդ տարօրինակ կերպով նայող զոյգ աչքերը և, չը նայելով իրան տիրած սարսափին, Նեխլիւզովը չէր կարողանում հեռացնել իր հայեացքը այդ վառ — ձերմակ սպիտակույցներով շիւ աչքերից: Նա յիշեց այն սարսափելի գիշերը և այդ գիշերուան կտորտուող սասուցը, մշուշը և, մանաւանդ, այն նուազած ու հակադարձ լուսինը, որ առաւօտեան դէմ գուրս եկաւ և սկսեց լուսաւորել ինչ-որ մի սև ու անոնլի բան: Այդ զոյգ աչքերը, որոնք նայում էին և նրա վրայ և նրա կողքով, յիշեցնում էին նրան այդ ինչ-որ սև ու անոնլի բանը:

«Ճանաչել է՞», մտածեց նա և կարծես կուչ եկաւ, հարուածի սպասելով: Բայց Մասլովան, որ չէր ճանաչել նրան, հանգիստ չունչ քաշեց ու սկսեց նորից նայել նախազահին: Նեխլիւզովը նոյնպէս չունչ քաշեց: «Օ՛հ, գոնէ չուտով պրծնէք», մտածում էր նա: Նա զգում էր այժմ նոյն բանը, ինչ որ զգում էր որսի ժամանակ, երբ պէտք է մահացնէր վիրաւորուած թրո-

չունին, — և՛ մարդուս վատն է թւում, և՛ խեղճն է գալիս, և՛ բարկութիւնը կիսամահ թռչունը թռպոտում է որսապարկի մէջ, — և՛ զգուելի է, և՛ խղճալի, և՛ մարդ ուզում է շուտով մահացնել ու մոռանալ:

Այդպիսի խառն զգացմունք էր զգում այժմ Նեխիլեդօվը, վկաների հարց ու փորձը լսելիս:

## XX

Բայց, կարծես նրա ջիգրու, գործը շատ երկարանում էր, — բոլոր վկաներին մէկիկ-մէկիկ ու յետոյ էլ էքսպէրտին հարց ու փորձ անելուց յետոյ, երբ դատախազի օգնականն ու պաշտպաններն էլ, ըստ սովորականին, խորիմաստ ձևով տուեցին բազմաթիւ անպէտք հարցեր, նախագահը երդուեալ ատենակալներին առաջարկեց նայել իրական ապացոյցները, որոնք բազկացած էին մի անագին մեծութեամբ և վարդաձև շարուած ազամանգներով մատանիից, որ անկասկած շինուած էր եղել սաստիկ հաստ ցուցամատի համար, և մի զտոցից (ֆիլտր), որի մէջ հետազօտել էին թոյնը: Այդ իրերը կնքուած էին և նրանց վրայ կպցրած էին ցուցագիրներ:

Երգուել դատաւորները արդէն պատրաստուում էին զննել այդ իրերը, երբ դատախազի օգնականը նորից բարձրացաւ տեղիցը և պահանջեց, որ իրական ապացոյցները զննելուց առաջ կարգան դիակի բժշկական հետազօտութիւնը:

Նախագահը, որ «Չուր տու, քչի» էր անում, որպէս զի ժամանակին հասնէր իր չվէյցարունու մօտ, չը կարողացաւ մերժել և համաձայնութիւն տուեց, թէ և շատ լաւ գիտէր, որ այդ թղթի ընթերցումը ոչ մի ուրիշ հետեանք չի կարող ունենալ, բայց ձանձրոյթից և ճաշի ժամանակը յետաձգելուց, և որ դատախազի օգնականը պահանջում է այդ միմիայն այն պատճառով, որ գիտէ, թէ ինքը իրաւունք ունի այդ բանը պահանջելու:

Արտաքին զննութիւնը ցոյց էր տուել, որ.

1) Ֆերապօնտ Սմիկօվի հասակը 2 արշ. 12 վերջօկ է:

— Ա՛յ թէ աժդահայ տղամարդ է եղել, — մտահոգ կերպով շնջաց վաճառականը Նեխիլեդօվի ականջին:

2) Տարիքը, արտաքին տեսքից դատելով, կարելի էր որոշել մօտաւորապէս քառասուն:

3) Դիակի տեսքը վերուած է:

4) Թաղանթների գոյնը ամեն տեղ կանաչաւուն է, տեղ-տեղ ծածկուած մութ բծերով:

5) Վերնամաշիլը մարմնի մակերևոյթի վրայ բարձրացել է զանազան մեծութեան բշտիկների ձևով, իսկ տեղ-տեղ պոկ է եկել ու կախուել մեծ-մեծ կտորներով:

6) Մազերը մուգ շէկ են ու խիտ, և ձեռք տալիս պոկ են գալիս կաշուց:

7) Աչքերը դուրս են եկել փոսերից և եղջիւրային թաղանթը նսեմացել է:

8) Քթի, ականջների խոռոչներից և բերնի մէջից դուրս է թորում թարախային հեղուկ, բերանը կիսաբաց է:

9) Վիզ համարեա չէ մնացել դէմքի և կրծքի ուռելուց:

10) Եւ այլն, և այլն:

Չորս երեսի վրայ, 27 կէտերով, այդպէս շարունակուում էր քաղաքումը քէֆ արած վաճառականի սարսափելի, ահազին, հաստ, դեռ ուռած և արդէն քայքայուող դիակի արտաքին զըննութեան նկարագրութիւնը: Այն անորոշ զգուանքը, որ զգում էր Նելսիւրգովը, աւելի ևս սաստկացաւ այդ դիակի նկարագրութեան ընթերցման ժամանակ: Կատիւչայի կեանքը և դիակի քթածակերից թորող թարախը, կոպիճներից դուրս եկած աչքերը, և իր վարմունքը Կատիւչայի հետ, — այդ բոլորը, թւում էր նրան, միևնոյն տեսակի բաներ էին և ինքը ամեն կողմից չըջապատուած էր ու կլանուած այդ բաներով: Երբ արտաքին զննութեան ընթերցումը պրծաւ, նախագահը ծանր շունչ քաշեց ու բարձրացրեց գլուխը, այն յոյսով, թէ վերջացել է, բայց քարտուղարը իսկոյն և եթ սկսեց կարգալ ներքին զննութեան նկարագրութիւնը:

Նախագահը նորից քաշ քցեց գլուխը և, կոթնելով ձեռքի վրայ, փակեց աչքերը: Նելսիւրգովի կողքին նստած վաճառականը հազիւ հազ էր զսպում քունը և մի-մի անգամ օրօրում էր տեղումը. մեղադրեալները, ինչպէս և նրանց յետին կանգնած ժանդարմները, անշարժ նստած էին:

Ներքին զննութիւնը ցոյց էր տուել, որ.

1) Գանգի մաշկերը հեշտութեամբ էին բաժանուում գանգի ոսկորներից, և լրջացումներ ոչ մի տեղ չէին նկատուում: 2) Գանգի ոսկորները միջին հաստութեան էին և անփխառ: 3) Ուղեղի պինդ թաղանթի վրայ կային երկու պիզմէնտացած բծեր, մօտ 4 մասնաչափ մեծութեամբ, իսկ ինքը թաղանթը տփոյն էր ու փայլատ և այլն և այլն, էլի 13 կէտ:

Յետոյ գալիս էին ընթերակաների անունները, ստորագրութիւններ և բժշկի եզրակացութիւնը, որից երևում էր, որ ստամոքսում և մասամբ աղիքներում ու երիկամունքներում՝ դիակը ճղած ժամանակ գտած ու արձանագրած փոփոխութիւն-

ները իրաւունք են տալիս եզրակացնել մեծ աստիճանի հաւանականութեամբ, թէ Սմիլկօվի մահը առաջացել է զինու հետ ստամոքսը ներմուծուած թոյնից: Ստամոքսում ու աղիքներում նկատուած փոփոխութիւնների հիման վրայ գծուար է ստել, թէ ինչ թոյն է ներմուծուել ստամոքսը. իսկ այն բանը, որ թոյնը թափանցել է ստամոքսը զինու հետ, երևում է նրանից, որ Սմիլկօվի ստամոքսում գտնուել է մեծ քանակութեամբ զինի:

— Երևում է՝ թունդ կոնծող է եղել,— նորից շնջաց սթափուած վաճառականը:

Այդ արձանագրութեան ընթերցումը, որ տեւց մօտ մի ժամ, չը բաւականացրեց սակայն դատախազի օգնականին: Երբ արձանագրութիւնը կարդացուեց պրծաւ, նախադահը զիմեց նըրան.

— Կարծում եմ, աւելորդ կը լինի կարգալ փորոտիքների հետազօտութեան արձանագրութիւնները:

— Ես կը խնդրէի կարգալ այդ հետազօտութիւնները,— խիստ կերպով, առանց նախազահին նայելու, ասաց դատախազի օգնականը, կիսով չափ ու կողքահան տեղիցը բարձրանալով և ձայնի եղանակով զգացնել տալով, որ ինքը իրաւունք ունի պահանջելու այդ բանը կարգալ, որ ինքը չի հրաժարուիլ այդ իրաւունքից և որ մերժումը առիթ կը լինի դատավճաի ջնջումը խնդրելու:

Դատարանի այն անգամը, որ երկար միբուք ունէր ու բարի, ներքև քաշուած աչքեր, և որ դուժով հիւանդ էր, թուլացած զգալով իրան, զիմեց նախազահին.

— Ինչի համար պէտք է կարգալ այդ բանը: Քաշքշում են միայն: Այդ նոր աւելները աւելի մաքուր չեն աւլում, հէնց այն է, որ աւելի երկար են աւլում:

Ոսկեպատ ակնոցաւոր անդամը ոչինչ չատաց և մտալ ու վճռարար նայում էր իր առաջը, ոչ մի լաւ բան չը սպասելով ոչ իր կնոջից, ոչ էլ կեանքից:

Արձանագրութիւնների ընթերցումը սկսուեց.

— 188... թուի, փետրուար ամսի 15-ին, ես ի ներքոյ ըստորագրեալս, ըժշկական բաժանմունքի յանձնարարութեամբ, № 638-ով, — սկսեց քարտուղարը վճռական կերպով և բարձրացնելով ձայնի աստիճանը, կարծես թէ ուղիւով փախցնել ըտլոր ներկայ եղողներին ճնշող քունը, — ըժշկական տեսչի օգնականի ներկայութեամբ կատարեցի հետեւալ փորոտիքների հետազօտութիւնը.

- 1) Աջ թոքի և սրտի (վեց ֆունտանոց ապակէ ամանում):
- 2) Ստամոքսի պարունակութեան (վեց ֆունտանոց ապակէ ամանում):

3) Ստամբուի (վեց ֆունտանոց ապակէ ամանում):

4) Լեարդի, փայծախի և երիկամունքների (երեք ֆունտանոց ապակէ ամանում):

5) Աղիքների (վեց ֆունտանոց կաւէ ամանում):

Նախագահը, այդ ընթերցումի սկզբում, թերուեց դէպի անդամներից մէկը ու ինչ որ շնջաց, յետոյ թերուեց դէպի միւսը և, դրական պատասխան ստանալով, ընդհատեց ընթերցումը այդ տեղում:

—Դատարանը աւելորդ է համարում այդ արձանագրութեան ընթերցումը,—ասաց նա:

Քարտուղարը լռեց ու սկսեց հաւաքել թղթերը. դատախազի օգնականը սկսեց բարկացած ինչ-որ գրի անցնել:

—Պարոն երգուեալ ատենակալները կարող են զննել իրական ապացոյցները,—ասաց նախագահողը:

Աւագը և երգուեալներից մի քանիսը բարձրացան տեղներից, և դժուարութիւն զգալով այն շարժումից կամ դիրքից, որ պէտք է հաղորդէին իրանց ձեռքերին, մօտեցան սեղանին և հերթով նայեցին մատանուն, սրուակին և զտոցին: Վաճառականը նոյն իսկ մատանու չափը փորձեց իր մատի վրայ:

—Այ թէ մատ է ունեցել հա՛, —ասաց նա, վերադառնալով իր տեղը:—Մատ չէ եղել հօ, ահագին վարունգ է եղել,—աւելացրեց նա, ակնբնաբար զուարճութիւն զգալով այն հակայտորիպ մտապատկերից, որ ինքը կազմել էր թունաւորուած վաճառականի մասին:

## XXI

Երբ իրական ապացոյցների զննութիւնը պրծաւ, նախագահը դատական քննութիւնը վերջացած յայտարարեց, և առանց ընդմիջումն անելու, ուղելով որքան կարելի է շուտ ազատել գլուխը, խօսքը տուեց մեղադրողին, այն յոյսով, թէ նա էլ մարդ է ու նոյնպէս ուզում է և՛ ծխել, և՛ ճաշել, և թէ նա կը խղճայ իրանց: Բայց դատախազի օգնականը չը խղճաց ոչ իրան, ոչ նրանց: Դատախազի օգնականը ի ընէ շատ յիմար էր. բայց բացի դրանից անբախտութիւն էր ունեցել զիմնազիայի դատընթացքը աւարտելու ոսկէ մեղալով և համալսարանում պարգե ստանալու իր մի շարագրութեան համար, որ վերաբերում էր սէրվիտուտներին ըստ հռովմէական իրաւունքի, և այդ պատճառով նա վերին աստիճանի ինքնապատահ էր ու ինքնագոհ (որին շատ նպաստում էին նրա յաջողութիւնները կանանց շրջանում), ուստի և չափազանց յիմար: Երբ խօսքը տրուեց նրան, նա կա-

մաց վեր կացաւ, ցոյց տալով իր շնորհալի հասակն ու կազմը, և, երկու ձեռքը դնելով բարձր սեղանի վրայ ու փոքր ինչ կոտցնելով գլուխը, աչք ածեց դահլիճին, հայեացքով խուսափելով մեղադրեալներից, ու սկսեց.

— Զեր դատին ենթակայ գործը, պարոն երգուեալ ատենակալներ, — սկսեց նա իր ճառը, որ պատրաստել էր արձանագրութիւնների ընթերցման ժամանակ, — մի, եթէ կարելի է այսպէս ասել, բնորոշ եղեոնագործութիւն է:

Դատախազի օգնականի կարծիքով, իր ճառը հասարակական նշանակութիւն էր ունենալու այն հոչակաւոր ճառերի նրման, որ արտասանել են հոչակ ձեռք բերած փաստարանները: Ծիշտ է, հանդիսատեսների տեղում միայն երեք կէն կային, — մի կար անող, մի խոհարարուհի ու Սիմօնի քոյրը, — և մի հատ կառապան, բայց այդ նշանակութիւն չունէր: Այն հոչակաւոր փաստարաններն էլ այդպէս էին սկսել: Իսկ դատախազի օգնականը իր համար կանոն էր չինել միշտ լինել իր կոչման բարձրութեան վրայ, այսինքն թափանցել յանցանքի հոգեբանական իմաստի խորքը և բանալ հասարակական խոցերը:

— Դուք տեսնում էք ձեր առաջ, պարոն երգուեալ ատենակալներ, մի դարավերջեան, եթէ կարելի է այսպէս ասել, բնորոշ եղեոնագործութիւն, որ կրում է իր վրայ, այսպէս ասած, առանձնայատուկ գծերը քայքայման այն սկզբնական երևոյթի, որին ենթարկում են մեր ժամանակ մեր հասարակութեան այն տարրերը, որոնք գտնուում են այդ պրօցէսի, այսպէս ասած, առանձնապէս կիզիչ ճառագայթների տակ...

Դատախազի օգնականը շատ երկար խօսեց, մի կողմից աշխատելով յիշել այն բոլոր խելացի բաները, որ նա պատրաստել էր մտքումը, իսկ միւս կողմից, և այդ գլխաւորն է, աշխատելով ոչ մի բոլորէ կանգ չառնել, այլ այնպէս անել, որ նրա ճառը, առանց դադարելու, ջրի պէս հոսէր մի ժամ ու քառորդի ընթացքում: Միայն մի անգամ նա կանգ առաւ և բաւական երկար ժամանակ կուլ էր տալիս թուրք, բայց յետոյ ուշքի եկաւ և այդ յապաղումի տեղը հանեց աւելի թունդ պերճախօսութեամբ: Նա խօսում էր մերթ քնքոյշ, շողովոր ձայնով, ստները շղատչուտ փոխելով ու երգուեալ ատենակալների վրայ նայելով, մերթ հանդարտ, գործազրազ ձայնով, նայելով իր տետրակի մէջ, և մերթ բարձր, դատափետող ձայնով, զիմելով երբեմն հանդիսականներին, երբեմն երգուեալ ատենակալներին: Նա ոչ մի անգամ չը նայեց միմիայն մեղադրեալներին, որոնք երբեք էլ աչքերը սեռեւել էին նրա վրայ: Նրա ճառում կար այն ամենը, ինչ որ ամենավերջին ժամանակները գործածական էր նրա

